ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ՆՎԵՐՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ, ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
Մարտ, 2024թ.

Սույն փաստաթուղթը մշակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «ԲԿԳ ազգային գործողությունների ծրագրի բաց արդարադատության և հակակոռուպցիոն հանձնառությունների բազմակողմանի իրականացում (7. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստր և 9. «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք)» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ՝ Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեվարքության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթղթում արտահայտված է հեղինակի՝ ԻՀԱ դիրքորոշումը, որի համընկնումը ԲԿԳ և ԵՄ դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Բովանդակություն

Հապավումներ 4

Ծանոթագրություն 5

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ 6

Ա) Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) ստանդարտներ 6

Բ) ՏՀԶԿ-ի ստանդարտներ 11

Գ) Միջազգային փորձ 15

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 44

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 63

Ա) Նվերների ռեեստրի և իրավակարգավորումների վերաբերյալ եզրակացություններ 63

Բ) Նվերների ռեեստրի և իրավակարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների և հանրային իրազեկման վերաբերյալ եզրակացություններ 68

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 71

Ա) Նվերների ռեեստրի և իրավակարգավորումների վերաբերյալ առաջարկություններ 71

Բ) Նվերների ռեեստրի և իրավակարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների և հանրային իրազեկման վերաբերյալ առաջարկություններ 76

Հապավումներ

ԱլԳ	Արևելյան գործընկերություն
ԱԺ	Ազգային ժողով
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԳՐԵԿՈ	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՎԻՎՕ	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանց

Ծանոթագրություն

Սույն փորձագիտական վերլուծության շրջանակներում կատարված վերլուծությունները վերաբերում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ նվերների հանձնման և նվերների հաշվառման գործընթացին։

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված արգելված նվերների կարգավորումների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի մասով վերլուծությունը ներկայացված է *Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանման միջազգային փորձի, օրենսդրության և պրակտիկայի փորձագիտական վերլուծության* շրջանակներում։

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Միջազգային պրակտիկայում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները ընդհանուր առմամբ ունեն նույն նպատակը, սակայն դրանք միմյանցից տարբերվում են կառուցակարգերի, գործիքների և կիրառման տեսանկյունից: Այս կապակցությամբ, ստորև ամփոփվում են նվերների հանձնման, հաշվառման (գրանցման) և ռեեստրի (գրանցամատյանի) միջազգային պրակտիկան և ստանդարտները, որոնք փորձարկված են ժամանակի ու պրակտիկայի ընթացքում, և կարող են ուսուցանելի ու կիրառելի լինել այլ երկրների կողմից: Դրանցից հատկապես ուշադրության են արժանի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից (այսուհետ՝ ՏՀԶԿ) և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից սահմանված ստանդարտները:

Արևելյան գործընկերության (ԱլԳ) փորձը նվերների ռեեստրի մասով ևս ուսումնասիրվել է: Որպես ԱլԳ երկրներ առանձնացվել են Ուկրաինայի և Մոլդովայի փորձերը, որոնք ըստ էության բխում են ՏՀԶԿ ստանդարտներից[1]:

Ա) Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) ստանդարտներ

1. Հայաստանի Հանրապետությանը (ՀՀ) տրված հանձնարարականները

Հայաստանը 2004 թվականից անդամակցում է Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբին (ԳՐԵԿՈ) և ենթարկվում է կանոնավոր գնահատման, որի նպատակն է պարզել անդամ պետության տարվող հակակոռուպցիոն քաղաքականության և դրա

[1] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: Հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385

կիրարկման համապատասխանությունը կազմակերպության հակակոռուպցիոն չափորոշիչներին: 2021 թվականի սեպտեմբերի 21-ին հրապարակվել է Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցը (հիշատակվում է նաև որպես՝ չորրորդ փուլի համապատասխանության զեկույց), որը վերաբերում էր պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը[2]: Հայաստանի համար ձևակերպված 18 հանձնարարականներից 3-ը վերաբերել են նշված երեք սուբյեկտային խմբերի շրջանում էթիկայի, բարեվարքության, շահերի բախման և նվերների ընդունման կարգավորումներին:

Մասնավորապես, այդ հանձնարարականներն են.

Հանձնարարական ii.

13. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով ***հստակ ուղղորդում կապահովվի*** *շահերի բախման և հարակից ոլորտներին, մասնավորապես՝* ***նվերների և այլ առավելությունների ընդունմանը,*** *անհամատեղելիության դեպքերին և լրացուցիչ գործունեությանը, ֆինանսական շահերին, տեղեկատվության և պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործմանը և երրորդ կողմերի, օրինակ՝ լոբբիստների հետ շփումներին առնչվող հարցերում, ii) այն լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝* ***մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն և իրազեկվածության մակարդակի բարձրացում:***

Չորրորդ փուլի համապատասխանության զեկույցով ԳՐԵԿՈ-ն այս հանձնարարականը գնահատվել է որպես **«մասամբ իրականացված»**[3] և վերահաստատել, որ Հանձնարարականի (i) մասի վերաբերյալ պատգամավորների վարքագծի կանոնագիրք, որը կներառեր համապատասխան ուղեցույցներ շահերի բախման և բարեվարքության վերաբերյալ, դեռևս առկա չէ: Հանձնարարականի (ii) մասի վերաբերյալ ընդգծել է, որ

---

[2] Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցը՝ պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ: Հրապարակվել է 2021 թվականի սեպտեմբերի 21-ին: Հասանելի է՝ https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad

[3] Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 76:

համակարգված և խորացված ուսուցում, ինչպես նաև խորհրդատվություն Կանոնագրքի վերաբերյալ չի ներդրվել:

Հանձնարարական iv.

*29. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է պատգամավորների կողմից էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու համար՝ i) էթիկայի կանոնների և անհամատեղելիության դեպքերի ու լրացուցիչ գործունեության, շահերի բախման և **նվերների ընդունման** վերաբերյալ կանոնների **անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողությունը**, ii) համապատասխան **պատասխանատվության ենթարկելու միջոցով կանոնների կատարումը**:*

Չորրորդ փուլի համապատասխանության զեկույցով այս հանձնարարականը գնահատվել է որպես **«մասամբ իրականացված»**[4]:

Հանձնարարական xvi.

*62. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հետագայում մշակել պատգամավորների, դատավորների և դատախազների կողմից **նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ**, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին:*

Չորրորդ փուլի համապատասխանության զեկույցով այս հանձնարարականը գնահատվել է որպես **«մասամբ իրականացված»**[5]:

---

[4] Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցը՝ պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ: Հրապարակվել է 2021 թվականի սեպտեմբերի 21-ին: Պարագրաֆ 76:

[5] Տե՛ս նույն տեղում:

Միաժամանակ հարկ է նշել, որ 2024 թվականի մարտի 18 - 22-ը տեղի է ունեցել ԳՐԵԿՈ-ի 96-րդ լիագումար նիստը, որի շրջանակներում հաստատվել է Հայաստանի վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի զեկույցը[6]: Գնահատման այս փուլը վերաբերում է «Կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության խթանմանը բարձրագույն գործադիր և իրավապահ մարմիններում»: Սույն վերլուծության կատարման ընթացքում գնահատման 5-րդ փուլի զեկույցը դեռևս հրապարակված չէր, ուստի դրան անդրադարձ չի կատարվել[7]:

Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին **ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույցով**, որը **հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին**, ընդգծված է այն հանգամանքը, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց **նվերների գրանցման և հաշվառման հատուկ մեխանիզմներ առկա չեն**, իսկ առկա կարգավորումները, ըստ որոնց՝ նվերները ստուգվում են միայն որպես տարեկան եկամուտների հայտարարագրերի մաս՝ այնքանով, որքանով դրանք հանդիսանում են գույք կամ եկամուտ, **ակնհայտորեն բավարար չեն ապահովելու համար շարունակական և համապարփակ վերահսկողություն**[8]: Համանման իրավիճակ է նաև դատավորների դեպքում, և **առկա չէ ընթացակարգ, որով էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը կհաշվառեր նվերները և կստուգեր նվերի հետ կապված տեղեկությունը**[9]: *Այսպիսով, ԳՐԵԿՈ-ն անբավարար է գնահատել ստացված նվերները բացահայտելու վերաբերյալ համընդհանուր պարտականության բացակայությունը (բացի եկամուտների տարեկան հայտարարագրեր ներկայացնելու ընդհանուր պահանջից, որը*

---

[6] Հաստատվել է Հայաստանի վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի զեկույցի հաստատման վերաբերյալ հաղորդագրությունը: Հասանելի է՝ https://www.coe.int/en/web/greco/-/greco-96th-plenary-meeting-18-22-march-2024-
https://iravaban.net/468006.html

[7] ՀՀ արդարադատության նախարարության հրապարակումը՝ ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի զեկույցի հաստատման վերաբերյալ: Հասանելի է՝
https://www.facebook.com/mojofarmenia/posts/pfbid02k5BSKQkbbXNTJNX6fcDvcyG1RnA6328ZkMPfcpwu8V4Gb1dmNE4W3vaGCE1Y69rxl

[8] Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույց: Հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին: Պարագրաֆներ 53, 80: Հասանելի է՝
https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8

[9] Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 139:

հստակորեն չի սահմանում նվերների կամ այլ օգուտների տեսակները): Ըստ այդմ, ԳՐԵԿՈ-ն հիշյալ զեկույցով Հայաստանին առաջարկում է **ներդնել մեխանիզմներ**, այդ թվում՝ նախատեսելով համապատասխան պատժամիջոցներ՝ ապահովելու **համար անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողություն** էթիկայի կանոնների և անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և **նվերների ընդունման սահմանափակումների պահպանման նկատմամբ**[10]: Նույն զեկույցի շրջանակներում, ԳՐԵԿՈ-ն նաև առաջարկել է ներդնել շահերի բախման և հարակից ոլորտներին, մասնավորապես՝ **նվերների և այլ առավելությունների ընդունմանը,** անհամատեղելիության դեպքերին և լրացուցիչ գործունեությանը, ֆինանսական շահերին, տեղեկատվության և պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործմանը և երրորդ կողմերի, օրինակ՝ լոբբիստների հետ շփումներին առնչվող հարցերում ներդնել այնպիսին գործնական միջոցներ, ինչպիսիք են օրինակ՝ **մասնագիտական վերապատրաստումը, խորհրդատվությունը և իրազեկվածության մակարդակի բարձրացումը**[11]**:**

2. ԳՐԵԿՈ-ի կողմից ընդունված ստանդարտները

2019 թվականի մարտի 20-ին ԳՐԵԿՈ-ի կողմից հրապարակված «Պետական պաշտոնյաների վարքագծի կանոններ. ԳՐԵԿՈ եզրահանգումներն ու առաջարկությունները» վերտառությամբ փաստաթղթում ԳՐԵԿՈ-ն ներկայացրել է իր գործունեության ընթացքում ներդրած ստանդարտները, դրանց հիման վրա պետություններն արված առաջարկությունները և գրանցած հաջողված և չհաջողված փորձերը: Դրանց շրջանակներում, անդրադառնալով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նվերների ռեեստրին, ԳՐԵԿՈ-ն որպես ընդունելի ստանդարտ ընդգծել է, որ այն անձանց համար, որոնց վստահված են բարձրագույն գործադիր իշխանություն, ԳՐԵԿՈ-ն խորհուրդ է տվել սահմանել նվերների հետ կապված առավել խիստ կարգավորումներ, որոնք կապահովեն նվերների **հաղորդումների (հաշվառումների) հստակ**

---

[10] Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույց: Հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին: Պարագրաֆ 80:

[11] Տե՛ս նույն տեղում, պարագրաֆ 223 (ii):

գործիքներ (եղանակներ) և տեղեկատվության հրապարակայնություն, ինչպես նաև համապատասխան ուղեցույց՝ որով կսահմանվի ստացած բոլոր տեսակի նվերների (օգուտների) հետ պատշաճ վարվելու կանոններ[12]:

Նույն փաստաթղթի շրջանակներում, ԳՐԵԿՈ-ն ընդգծել է այն կարևոր հանգամանքը, որ հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է վերապատրաստրումներից և հանրային իրազեկումից: Հիշյալը ընդգծել է մի քանի գործոններով: Դրանք են՝

- այն անձանց իրազեկվածությունը, որոնց հասցեագրված է հակակոռուպցիոն քաղաքականությունը, ինչպես նաև դրանում տեղ գտած դրույթներին այդ անձանց կողմից համապատասխան գործելու պատրաստակամությունը, կամքը,
- բոլոր մակարդակներում պետական պաշտոնյաների համապատասխան վերապատրաստում իրականացնելը՝ նախնական և շարունակական հիմունքներով, հնարավորության դեպքում օգտագործելով կոնկրետ օրինակներ: Մասնավորապես՝ խորհուրդ է տրվում իրականացնել հանրային էթիկայի և կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ ուսուցումներ, ներառյալ՝ գործնական խնդիրների և իրավիճակային դեպքերի լուծում: Օրինակ՝ նվեր ստանալու դեպքում պատշաճ և իրավաչափ վարքագիծը, շահերի բախումը և այլն[13]:

Բ) ՏՀԶԿ-ի ստանդարտներ

1. ***ՀՀ-ին տրված հանձնարարականները***

---

[12] «Պետական պաշտոնյաների վարքագծի կանոններ. ԳՐԵԿՈ եզրահանգումներն ու առաջարկությունները»: Հրապարակվել է ԳՐԵԿՈ-ի կողմից 2019 թվականի մարտի 20-ին: էջ 17: Հասանելի է՝ https://rm.coe.int/codes-of-conduct-for-public-officials-greco-findings-recommendations-p/168094256b

[13] «Պետական պաշտոնյաների վարքագծի կանոններ. ԳՐԵԿՈ եզրահանգումներն ու առաջարկությունները»: Հրապարակվել է ԳՐԵԿՈ-ի կողմից 2019 թվականի մարտի 20-ին: էջ 7:

ՏՀԶԿ (2024) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների մոնիտորինգի հինգերորդ փուլի ելակետային զեկույցի *հենանիշ 2.2.1-ը* վերաբերում է հետևյալին. *«Պետական պաշտոնյաների նկատմամբ պարբերաբար կիրառվում են պատասխանատվության միջոցներ հետևյալ խախտումների համար. (C). Նվերների կամ հյուրասիրության (հյուրընկալության) հետ կապված սահմանափակումների խախտում»*[14]: Գնահատելով հանձնառության ուղղությամբ Հայաստանի կատարած գործողությունները, ՏՀԶԿ-ն ընդգծել է, որ նվերների ռեեստր ստեղծելու վերաբերյալ կատարած փոփոխությունները («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 29 և 30) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում (ՎԻՎՕ) կատարված փոփոխությունները, որոնք նախատեսում են նվերների ընդունման կանոնների կամ դրանց հաշվառման կարգի խախտման համար վարչական պատասխանատվության միջոցներ (հոդված 166.1) ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարից: Հետևապես, 2022 թվականին նվերների կամ հյուրընկալության հետ կապված խախտումների համար պատասխանատվության միջոցներ չեն եղել, ինչպես պահանջում է *(C)* կետը[15]:

Բացի այդ, նվերների արգելքի վերաբերյալ իշխանությունները նշել են, որ 2022 թվականին, օրենսդրական բացերի պատճառով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) չի կարողացել արդյունավետորեն արձագանքել նվերներ ընդունելու սահմանափակումների խախտումներին կամ կիրառել համապատասխան պատժամիջոցներ: Իսկ 2023 թվականին ԿԿՀ-ն երեք վարչական վարույթ է իրականացրել՝ նվերներ ընդունելու սահմանափակումները խախտելու համար[16]:

2. *ՏՀԶԿ-ի կողմից ընդունված ստանդարտները*

ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի գնահատման շրջանակի «Շահերի բախման ոլորտի» 3-րդ ինդիկատորի՝ *«Հանրային*

---

[14] ՏՀԶԿ (2024) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների մոնիտորինգի հինգերորդ փուլի ելակետային զեկույց: Հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/fb158bf9-en.pdf?expires=1711347233&id=id&accname=guest&checksum=95BACA2F2F5C8207CF26901894FA5F53

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 40

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 42

պաշտոն զբաղեցնող անձանց ակտիվների և շահերի հայտարարագիր» 3.2-ի (C) հենանիշը սահմանում է հետևյալ պահանջը. «*3.2.* ***Օրենսդրությունը*** *կամ պաշտոնական ուղեցույցները պահանջում են հայտարարություններում* ***հրապարակել հետևյալ կետերը****. (C)* ***նվերները, ներառյալ բնաիրային նվերները և ծառայությունների դիմաց վճարումը, ինչպես նաև նվերի աղբյուրի նշումը****»*[17]*:*

> *Միջազգային ստանդարտներով տարբերակվում են բուն իրավիճակային (ad hoc) շահերի բախման կանխարգելման և կառավարման կառուցակարգեր, ինչպես նաև շահերի բախմանն առնչվող այլ սահմանափակումներ՝ նվերների ընդունման սահմանափակումները, անհամատեղելիության պահանջները, մասնավորապես՝ ՏՀԶԿ-ի կողմից շեշտադրվում է սեփականության իրավունքից հրաժարվելու պահանջը՝ մասնագիտացված կառույցներին հավատարմագրային կառավարման հանձնելու եղանակով, և հետաշխատանքային սահմանափակումները, որի նպատակն է կանխել «պտտվող դռների» (revolving door) կոռուպցիոն սխեմաներում հայտնվելու իրավիճակները:*

Իր հերթին, նվերները կարող են ներկայացվել կա՛մ որպես եկամտի մաս, կա՛մ որպես առանձին հայտարարագրման ենթակա գույք: Եթե նվերը ներկայացված է որպես եկամտի մաս, ապա դրա ներկայացման ձևից պետք է հստակ պարզ լինի, որ այն նվեր է: Նվերը պետք է լայնորեն ընկալվի որպես ցանկացած նյութական կամ ոչ նյութական գույք կամ օգուտ, որը ստացվել է անվճար կամ շուկայական նվազագույն գնից ցածր, ներառյալ բնաիրային նվերները, հայտարարատուին կամ նրա ընտանիքի անդամին մատուցված ծառայությունների

[17] ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, մոնիթորինգի 5-ի փուլ: Գնահատման շրջանակ: Էջեր 32-36: Հասանելի է՝ https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf

վճարումը (օրինակ՝ հովանավորված ճանապարհորդություն, կացարան, առողջապահություն, կրթություն և այլն): Նվերի աղբյուրը պետք է նշվի ձևաթղթում[18]:

Ուկրաինայում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույցի *հենանիշ 2.3.2-ը* վերաբերում է հետևյալին. *«Հատուկ դեպքերով, շահերի բախման վերաբերյալ ներկայացված հաղորդումների լուծման մասին տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է առցանց»:* Այս հենանիշը պահանջում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների ընդունման կարգավորումների շրջանակներում սահմանվի պահանջ առ այն, որ կենտրոնական (միասնական) մարմինը կամ առանձին գերատեսչությունները **հանրայնացնեն նշված պաշտոնյաների կողմից ստացված նվերները:** Այն կարելի է իրականացնել այնպիսի գործիքների միջոցով, ինչպիսիք են **հանրությանը հասանելի նվերների գրանցամատյանները կամ առցանց հրապարակման այլ գործիքները**, որոնք պետք է պարբերաբար հրապարակվեն կամ թարմացվեն առցանց՝ կենտրոնական (միասնական) մարմնի կամ առանձին գերատեսչության կողմից: Միևնույն ժամանակ, այս հենանիշը չի կարող ներառվել ակտիվների և շահերի հայտարարագրման շրջանակներում, որտեղ պահանջվում է ներկայացնել ստացված նվերները, քանի որ դրանք սովորաբար **չեն ներառում որոշակի արժեքից բարձր «արգելված» նվերները**, **որոնք պաշտոնյաները պարտավոր են հաշվառել և հանձնել պետությունը**[19]:

Ուկրաինայի կառավարությունն որպես նվերների բացահայտման գործիք նշել էր պաշտոնյաների գույքի հայտարարագրերի ինստիտուտը: Ուկրաինայում պաշտոնյաները ստացված նվերները, որոնց արժեքը գերազանցում է թույլատրելի շեմը, պարտավոր են այդ նվերները որպես եկամուտ հայտարարագրել իրենց գույքի հայտարարագրերում: Ինչպես հայտնել էր Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը, Ուկրաինայում նվերների կենտրոնական ռեգիստր գոյություն չունի, և որ գործնականում իշխանությունները չեն հավաքում նման տեղեկատվություն՝ փոխարենը հիմնվում են գույքի հայտարարագրով ներկայացված տեղեկությունների վրա: Այս կապակցությամբ ՏՀԶԿ-ը նշել, որ այս գործիքը չի

---

[18] ՏՀԶԿ (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր. Ուղեցույց: էջ 24: Հասանելի է՝ https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf

[19] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում:

ներառում որ օրինակ նվերների հաշվառումը: Ուստի, այս ընթացակարգը չի նախատեսում նման նվերների հրապարակային բացահայտում[20]:

Այսպիսով, Ուկրաինայում ներդրված չէ նվերների միասնական ռեեստր[21]:

Գ) Միջազգային փորձ

ՄՈԼԴՈՎԱ

Մոլդովայի Հանրապետության կառավարությունը 2020 թվականի փետրվարի 26-ին ընդունել է Նվերների իրավական ռեժիմի մասին թիվ 116 հրամանը[22]: Հրամանի ընդունման համար հիմք են հանդիսացել «Բարեվարքության մասին» թիվ 82/2017 օրենքի 16-րդ հոդվածը և «Կառավարության ծառայողի վարքագծի կանոնների» մասին թիվ 25/2008 օրենքի 11-րդ հոդվածը:

Համաձայն հրամանի՝ քաղաքավարության կամ հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ստացված նվերների թույլատրելի արժեքը սահմանվել է առավելագույնը 1000 մոլդովական լեյ մեկ օրացուցային տարվա ընթացքում: Հրամանով հաստատվել է նաև նվերների իրավական ռեժիմի կանոնակարգը, որով սահմանվել են նվերների գնահատման և հաշվառման հանձնաժողովի գործունեության կարգը, ինչպես նաև քաղաքավարության կամ հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ստացված նվերների (այսուհետ՝ թույլատրելի նվերներ) հաշվարկումը, գնահատումը, պահպանումը, օգտագործումը և ստացված նվերների ետգնումը, ինչպես նաև պետական գործիչներին առաջարկվող արգելված նվերների շրջանակը՝ «Բարեվարքության մասին» 82/2017 օրենքի 3-րդ հոդվածի մասով: Հրամանի շրջանակներում տրված են նաև մի քանի եզրույթների իմաստներ, ըստ այդմ՝

- **Նվերներ են** համարվում այն առարկաները (նյութական և ոչ նյութական), ծառայությունները, արտոնությունները, առաջարկները կամ ցանկացած այլ

[20] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: էջ 35:
[21] Տե՛ս նույն տեղում, էջ 32:
[22] Նվերների իրավական ռեժիմի մասին Մոլդովայի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 26-ի թիվ 116 հրաման: Հասանելի է՝ https://cis-legislation.com/document.fwx?rgn=123971

արտոնություն, որոնք առաջարկվում են պետական գործիչներին ծառայողական պարտավորությունների կատարման դիմաց:

- **Թույլատրելի նվերներն են** քաղաքավարության կամ հյուրընկալության միջոցառումների շրջանակներում առաջարկվող նվերներ, ներառյալ՝ տարեդարձի (տարելիցի) և հիշատակի մետաղադրամները:
- **Անթույլատրելի (արգելված) նվերներ են** համարվում առարկաները, ծառայությունները, արտոնությունները, առաջարկները, որոնք նախատեսված են պետական գործիչների կամ նրանց ընտանիքի անդամների համար, եթե դրանց տրամադրումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է իրենց ծառայողական գործունեության իրականացման հետ:
- **Քաղաքավարության շրջանակներում ստացված նվերներ են** համարվում նրանք, որոնք ստացվել են անձնական/մասնագիտական/ազգային տոների/ գործողությունների համատեքստում՝ ի նշան երախտիքի, և որոնք չեն ազդում և չեն կարող ընկալվել որպես ազդող հանգամանք աշխատանքային (ծառայողական) պարտականությունների անաչառ կատարման վրա:
- **Հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ստացված նվերներն են** առարկաները, ներառյալ՝ շուտ փչացող ապրանքները, որոնք սովորաբար առաջարկվում են պաշտոնական պատվիրակությունների ներկայացուցիչներին կամ ներկայացվում այլ հանրային սուբյեկտի, համայնքի կամ օտարերկրյա կառավարության ներկայացուցիչներին:

Հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ստացված նվերները հանրային սուբյեկտի (պետական կարգավիճակ ունեցող մարմնի) անունից ընդունվում են այն հանրային սուբյեկտի պաշտոնյաների կողմից: Հյուրընկալության միջոցառումների շրջանակներում առաջարկվող **նվերների ստացումը գրանցվում է թույլատրելի նվերների հաշվառման գրանցամատյանում**: Ընդ որում, հյուրընկալության միջոցառումների շրջանակներում ներկայացած **նվերը համարվում է հանրային սուբյեկտի սեփականություն**՝ անկախ դրա արժեքից:

Թույլատրելի նվերները, որոնք ներառում են սպորտային, մշակութային կամ հանրային միջոցառումների համար արտոնյալ հրավերներ/տոմսեր, հոգում են տրանսպորտի, կացարանի և օրապահիկի ծախսեր, տրամադրում են զեղչեր, արտոնություններ և

հավատարմության ծրագրեր, բացառությամբ այն դեպքերի, երբ արտոնությունների կամ զեղչերի տեսքով ստացված նվերները տրամադրվել են լայն հանրությանը, ինչպես նաև հանրային սուբյեկտին առաջարկվող ցանկացած այլ արտոնություն կամ առավելություն **ենթակա են հայտարարագրման, գնահատման և հաշվառման:**

Նվերների հաշվառման և գնահատման հանձնաժողով. Թույլատրելի նվերների գնահատում

Բոլոր թույլատրելի նվերները հայտարարագրվում և գրանցվում են յուրաքանչյուր պետական մարմնում վարվող հանրային գրանցամատյանում, որը հրապարակվում է հանրային սուբյեկտի ինտերնետային էջում[23]: Հանրային սուբյեկտի, այն է՝ պետական կարգավիճակ ունեցող մարմնի ղեկավարի իրավական ակտով ստեղծվում է **նվերների հաշվառման և գնահատման հանձնաժողով**: Հանձնաժողովը բաղկացած է երեք անդամից, ներառյալ՝ նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի կազմում, պարտադիր կարգով ընդգրկվում է հանրային սուբյեկտի ֆինանսատնտեսական ծառայության աշխատակիցը, որը, որպես կանոն, հանձնաժողովի քարտուղարն է: Հանձնաժողովի ստեղծման մասին վարչական ակտով նշանակվում են նաև հանձնաժողովի 3 փոխարինող անդամներ:

Հանձնաժողովի անդամների կատարած աշխատանքները հանձնաժողովի կազմում չի վճարվում:

Հանձնաժողովը ունի հետևյալ լիազորությունները՝

1) գրանցել թույլատրելի և արգելված նվերները,
2) գնահատել թույլատրելի նվերները,
3) թույլատրելի նվերի դեպքում այն վերադարձնել հանրային սուբյեկտին:

Թույլատրելի նվերը՝ որպես հանրային սուբյեկտի սեփականություն, պահվում է հանրային սուբյեկտի ղեկավարի կողմից հետևյալ նպատակներով.

4) ըստ անհրաժեշտության՝ արգելված նվերը փոխանցել Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային կենտրոնին, կամ թույլատրելի նվերն անվճար փոխանցել բարեգործական նպատակներով,

[23] Մոլդովայի «Բարեվարքության մասին» թիվ 82/2017 օրենք, հոդված 16: Հասանելի է՝ https://vetting.md/wp-content/uploads/2022/10/Law-No.-82-on-integrity.pdf

5) ապահովել հանձնաժողովին փոխանցված թույլատրելի նվերների անվտանգությունը,
6) իրականացնել թույլատրելի նվերների գույքագրում,
7) Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային կենտրոնին փոխանցել հանրային սուբյեկտի ստացված արգելված նվերները,
8) եռամսյակը մեկ վարել և թարմացնել հանրային սուբյեկտի պաշտոնական ինտերնետային էջում թույլատրելի և անթույլատրելի նվերների հաշվառման գրանցամատյանը:

Թույլատրելի նվերները, որոնց արժեքը **չի գերազանցում** Կառավարության կողմից սահմանած **թույլատրելի շեմը**, կարող են **պահվել դրանք ստացած անձի կողմից** կամ կարող են ուղարկվել **պետական մարմնին**՝ դրա տնօրինման նպատակով՝ միաժամանակ ապահովելով նախատեսված երկու դեպքերում էլ դրանց հայտարարագրումը: **Սահմանված շեմը գերազանցող արժեք ունեցող թույլատրելի նվերները** հայտարարագրվելուց հետո տրամադրվում են պետական մարմին՝ դրա տնօրինման նպատակով: Եթե անձը հայտարարում **է թույլատրելի նվերը պահելու իր մտադրության մասին**, որի արժեքը **գերազանցում է սահմանված շեմը**, վերջինս իրավունք ունի հետ **գնել** այն՝ պետական կազմակերպության բյուջե վճարելով սահմանված շեմի և նվերի գնի արժեքի տարբերությունը[24]:

ԼԱՏՎԻԱ

Լատվիայում պաշտոնատար անձանց նվերների ընդունման և հանձնման կարգը նախատեսված է Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենքով[25]:

Պաշտոնական պարտականությունները կատարելիս պետական պաշտոնյային **արգելվում է ընդունել նվեր կամ այլ նյութական օգուտ, բացառությամբ** ստորև նախատեսված դեպքերի:

---

[24] Մոլդովայի «Բարեվարքության մասին» թիվ 82/2017 օրենք, հոդված 16:
[25] «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Լատվիայի օրենք: Էջ 52: Հասանելի է՝ https://www.oecd.org/latvia/37117322.pdf

Պաշտոնական պարտականությունները կատարելիս պաշտոնատար անձին **թույլատրվում է ընդունել միայն դիվանագիտական նվերներ**, ինչպես նաև այն նվերները, **որոնք տրվում են պաշտոնատար անձին՝**

- օտարերկրյա պետություններում պաշտոնական կամ աշխատանքային այցերի ընթացքում,
- Լատվիայի Հանրապետության ազգային տոներին և հիշատակի օրերին,
- պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ձեռնարկության (ընկերության) տարեդարձի օրը, որտեղ պաշտոնյան աշխատում է,
- օրենքներով նախատեսված կամ Կառավարության կողմից սահմանված այլ դեպքերում:

Նշված օրենքի իմաստով դիվանագիտական նվերներն այն նվերներն են, որոնք օտարերկրյա պաշտոնյաները տալիս են Նախագահին, Սեյմի[26] նախագահին, վարչապետին, արտաքին գործերի նախարարին և Արտաքին գործերի նախարարության այլ պաշտոնյաների՝ պետական, պաշտոնական կամ աշխատանքային այցերի ընթացքում՝ համաձայն արարողակարգի: Վերը նշված նվերները համարվում են պետական սեփականություն: Դիվանագիտական նվերները **գրանցվում են** Արտաքին գործերի նախարարության **պետական միասնական գրանցամատյանում**, և դրանց կիրառման կարգը որոշում է արտաքին գործերի նախարարը: Պետության կամ տեղական ինքնակառավարման մարմնի (ՏԻՄ) կամ ձեռնարկության (ընկերության) ղեկավարը, որտեղ նվեր ստացողը պաշտոնյա է, որոշում է կայացնում նվերների օգտագործման վերաբերյալ՝ առաջնորդվելով կառավարության կարգով նախատեսված ընթացակարգերով: Այն դեպքում, եթե նվերը անհատական օգտագործման ապրանք է, նվեր ստացողը կարող է **նախապես գնել այն**: Նվերների հետ կապված նախնական գնման կանոնները նույնպես սահմանում է Կառավարությունը:

[26] Սեյմը հանդիսանում է Լատվիայի Հանրապետության խորհրդարանը:

ՍԼՈՎԵՆԻԱ

Սլովենիայում պաշտոնատար անձանց նվերներ ընդունելու և սահմանափակումների կարգավորումները նախատեսված են Նվերներ ընդունելու հետ կապված պաշտոնատար անձանց սահմանափակումների և պարտականությունների մասին կանոններով[27]:

Ըստ այդ կանոնների՝ պաշտոնատար անձինք չեն կարող ընդունել նվերներ կամ այլ արտոնություններ՝ կապված իրենց պարտականությունների կատարման հետ, բացառությամբ ներկայացուցչական նվերների (protocol gifts) և փոքր արժեք ունեցող սիմվոլիկ (occasional gifts) նվերներից:

Ներկայացուցչական նվերներն այլ պետական մարմինների, այլ երկրների, միջազգային կազմակերպությունների ու կառույցների ներկայացուցիչների կողմից այցելությունների, հյուրընկալության կամ այլ առիթների ժամանակ տրվող նվերներն են:

Փոքր արժեք ունեցող սիմվոլիկ նվերներ են համարվում հատուկ առիթներով տրվող նվերները, որոնց արժեքը չի գերազանցում **75 եվրոն արժեքը** և որոնց ընդհանուր արժեքը մեկ տարվա ընթացքում չի գերազանցում **150 եվրոն**, եթե դրանք ստացվել են նույն աղբյուրից: **Գումարը, արժեթղթերը կամ թանկարժեք մետաղները չեն համարվում փոքր արժեք ունեցող նվեր:**

Նվերի արժեքը՝ նվերի շուկայական գինն է կամ շուկայական գնի և նվերի դիմաց վճարված գնի տարբերությունը:

Կանոններով նախատեսված արգելքներն ու սահմանափակումները կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու արդյունքում նվերը տրվում է նրա ընտանիքի անդամներին:

Նվերների հաշվառման և հանձնման կարգը

---

[27] Նվերներ ընդունելու հետ կապված պաշտոնատար անձանց սահմանափակումների և պարտականությունների կանոններ: Հասանելի է՝ https://pisrs.si/pregledPredpisa?id=PRAV10334

Նվեր ընդունելու դեպքում պաշտոնատար անձը պետք է հնարավորինս սեղմ ժամկետում **լրացնի ստացված նվերի հաշվառման ձևաթուղթը** և **դա հանձնի այն մարմնին**, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:

Պաշտոնատար անձը **նվերի հաշվառման** լրացնում է հետևյալ տեղեկությունները.

- պաշտոնատար անձի անուն, ազգանուն, և ծառայողական գործառույթը,
- նվիրատուի անունը, ազգանունը և հասցեն, կամ իրավաբանական անձի/մարմնի անվանումը և գլխամասային գրասենյակը (եթե նվերը տրվել է իրավաբանական անձի կամ մարմնի անունից),
- նվերի ստացման ամսաթիվը,
- նշում այն մասին, թե արդյո՞ք նվերը ներկայացուցչական է, թե՞ սիմվոլիկ: Ներկայացուցչական նվերների և սիմվոլիկ արժեք ունեցող նվերների (occasional gifts) դեպքում՝ այդ փաստի մասին նշում,
- նվերի տեսակը և արժեքը, ինչպես նաև նշում այն մասին, թե ինչպես է որոշվել դրա արժեքը,
- նվեր տալու պատճառները կամ այն հանգամանքները, որոնցում տրվել է նվերը,
- նշում այն մասին, թե արդյո՞ք նվերը դարձել է պաշտոնատար անձի, թե՞ պետության, համայնքի կամ կազմակերպության սեփականությունը, որտեղ պաշտոնատար անձը կատարում է իր գործառույթը,
- նվերների ընդհանուր արժեքը, որը պաշտոնատար անձը արդեն ստացել է նույն աղբյուրից (նվիրատուից)՝ օրացուցային տարվա ընթացքում,
- ձևաթղթի լրացման ամսաթիվը,
- պաշտոնատար անձի ստորագրությունը:

Եթե նվերն ընդունվում է պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կողմից, ապա պաշտոնատար անձը պարտավոր է լրացնել ձևաթուղթը, ապա այն փոխանցել տվյալ մարմնում **նվերների հաշվառման ձևաթղթերի վարման մասով պատասխանատու անձին**:

Փոքր արժեք ունեցող նվերները, որոնց արժեքը չի գերազանցում **25 եվրոն**, **նվերների հաշվառման ձևաթղթում չեն ներառվում**: Միևնույն ժամանակ, եթե պաշտոնատար անձը գտնում է, որ մեկ տարվա ընթացքում նույն աղբյուրից ստացված փոքր արժեք ունեցող

նվերների ընդհանուր արժեքը գերազանցել է **75 եվրոն**, ապա վերջինս պարտավոր է քայլեր ձեռնարկել կանոններին համապատասխան:

Ներկայացուցչական և սիմվոլիկ նվերները, որոնք դառնում են պետության, համայնքի կամ այն կազմակերպության սեփականությունը, որտեղ պաշտոնատար անձը իրականացնում է իր ծառայողական պարտականությունները, պաշտոնատար անձը պետք է այն ստանալուց անմիջապես հետո կամ առաջին հնարավորության դեպքում **դրանք հանձնի նվերների հաշվառման ձևաթղթերի վարման մասով պատասխանատու անձին**: Այս կապակցությամբ, պաշտոնատար անձի պահանջով վերջինիս տրվում է **գրավոր տեղեկանք՝** ստացված նվերի հաշվառման ձևաթուղթը տրամադրելու կամ նվերը պաշտոնատար անձի պաշտոնավարող մարմնին հանձնելու վերաբերյալ:

Ըստ կանոնների՝ այն մարմինը, որտեղ անձը զբաղեցնում է պաշտոն, լրացված ձևաթուղթը համարակալում է հերթական համարով և գրանցում նվերների հաշվառման ձևաթղթերի ցանկում: Այս մարմինը նաև պարտավոր է ապահովել պետության, համայնքի կամ կազմակերպության սեփականություն դարձած նվերի գրանցումը համապատասխան մատյաններում, ինչպես նաև՝ նվերի ճիշտ օգտագործումը, պահպանումը և հնարավոր ապահովագրումը:

Եթե նվերի արժեքը պաշտոնատար անձի կողմից չի որոշվում, ապա գնահատումը կատարում է գրանցող մարմինը: Եթե նվերի շուկայական արժեքը հնարավոր չէ որոշել, ապա դրա արժեքը որոշվում է պաշտոնատար անձի կամ նվերների հաշվառման ձևաթղթերի վարման մասով պատասխանատու անձի՝ **ոչ մասնագիտական գնահատականի հիման վրա**:

Եթե նվերը արվեստի գործ է կամ պատմական արժեք ներկայացնող իր կամ այնպիսի արժեք, որը չի կարող գնահատվել շուկայական չափանիշներով, ապա նվերի արժեքը որոշվում է **փորձագետի գնահատականի հիման վրա**:

Պետական կամ համայնքի սեփականություն դարձած նվերի տնօրինման եղանակը սահմանվում է այն մարմնի ղեկավարի կողմից, որտեղ նվերը ստացած անձը զբաղեցնում է պաշտոն: Այն դեպքում, երբ նվերն ընդունվել է մարմնի ղեկավարի կողմից, նվերի օգտագործման եղանակը որոշվում է **նրա տեղակալի կողմից**:

Եթե ներկայացուցչական նվեր ստանալուց հետո, որը դարձել է պետության կամ համայնքի սեփականությունը, պարզվում է, որ այն պիտանի չէ օգտագործման կամ պահպանման համար, ապա նվերը փոխանցվում է այն կազմակերպությանը, որը զբաղվում է համանման իրերի արտադրանքով կամ առևտրով, կամ նվիրաբերել:

Մարմինը պարտավոր է նվեր ստացողից ստանալ **նվերը հանձնելու մասին տեղեկանք և այն գրանցել նվերների հաշվառման մատյանում**:

Եթե պաշտոնատար անձը նվեր է ստանում փոստով կամ անուղղակի այլ եղանակով, ապա վերջինս այդ փաստի մասին կատարում է համապատասխան նշում՝ նվերների հաշվառման ձևաթղթում:

Նվերների ցանկի վարման կարգը, պատասխանատուները և վերահսկողությունը

Նվերների ցանկը կազմվում է համարվում է նվերների հաշվառման մասին լրացված ձևաթղթերի հիման վրա: Յուրաքանչյուր պաշտոնատար անձ իրավունք ունի ստուգելու նվերների ցանկը՝ իր հետ կապված տվյալների մասով:

Յուրաքանչյուր մարմնում նշանակվում են **մեկ կամ մի քանի անձինք, որոնք պատասխանատու են նվերների հաշվառման ցանկի պատշաճ վարման համար**:

Այն կանոնների կատարման նկատմամբ **ներքին վերահսկողությունն** իրականացնում են այն մարմինների ղեկավարները, որտեղ նվեր ստացած պաշտոնատար անձինք իրականացնում են իրենց ծառայողական գործառույթները: Մարմինների ղեկավարները վերահսկողության իրականացումը կարող են նաև **լիազորել այլ անձի**:

Այն կանոնների կատարման նկատմամբ **արտաքին հսկողությունն** իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման» մասին ակտով սահմանված լիազորություններին համապատասխան:

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Ի կատարումն «Հանրային գործունեության կատարման ընթացքում էթիկայի մասին» օրենքի 18-րդ հոդվածի, համաձայն որի՝ «Պետական պաշտոնատար անձինք չեն կարող ստանալ նվերներ կամ նվիրատվություններ, այդ թվում՝ ծառայությունների կամ ապրանքների

տեսքով, որոնք կապված են իրենց պարտականությունների կատարման հետ...», ընդունվեց 1179/16 հրամանագիրը՝ «Նվերների կարգավորումը՝ պետական պաշտոնյաների համար»[28]:

Այն ստեղծում է **«Պաշտոնատար անձանց նվերների ռեեստր» և «Երրորդ անձանց կողմից ֆինանսավորվող ուղևորությունների մասին հաշվառում»**, որը կառավարվում է Արգենտինայի արդարադատության և մարդու իրավունքների նախարարության Հակակոռուպցիոն գրասենյակի կողմից: Այն կարգավորում է 25,188 օրենքի 18-րդ հոդվածով (քաղաքավարություն և դիվանագիտական ավանդույթներ) սահմանված նվերներ ստանալու արգելքից բացառություններ՝ հստակեցնելով դրա հայեցակարգն ու շրջանակը, և բոլոր դեպքերում սահմանելով գրանցման պարտավորությունը: Այն բացառապես վերաբերում է Ազգային պետական կառավարմանը[29]:

Պաշտոնատար անձանց նվերների ռեեստրի և Երրորդ անձանց կողմից ֆինանսավորվող ուղևորությունների մասին ռեեստրի տեղեկությունները հասանելի են Հակակոռուպցիոն գրասենյակի կայքում, ինչպես նաև տեղադրված են **Արդիականացման նախարարության բաց տվյալների պորտալում**:

Անհրաժեշտության դեպքում, Հակակոռուպցիոն **գրասենյակը տալիս է հրամանագրից բխող նորմերի բացատրությունները և մեկնաբանությունները**՝ գործնականում դրանց կիրառման նպատակով:

Քաղաքավարություն կամ դիվանագիտական ավանդույթների շրջանակներում պետական պաշտոնյաներին տրվող ապրանքները և ծառայությունները գրանցվում և ընդգրկվում են **Պետության ազգային ակտիվներում**՝ հետևյալ կարգով.

1. պետական պաշտոնյան նվերը, նվիրատվությունը, օգուտը (առավելությունը) կամ պարգևը ստանալուց հետո պետք է քսան (20) աշխատանքային օրվա ընթացքում այն գրանցի Պաշտոնատար անձանց նվերների ռեեստրում: Նույն ժամկետը տարածվում է արտերկրում մշտական հիմունքներով ծառայողական պարտականություններ կատարող յուրաքանչյուր անձի վրա: Եթե պաշտոնյան պարբերաբար գտնվում է երկրից դուրս, ապա վերջինս համար գրանցման

---

[28] «Նվերների կարգավորումը՝ պետական պաշտոնյաների համար» 1179/16 հրամանագիրը: Հասանելի է՝ http://servicios.infoleg.gob.ar/infolegInternet/anexos/265000-269999/267949/norma.htm

[29] Արգենտինայի հանրային սեկտորում բարեվարքության մշակույթի ձևավորում: Հրապարակված է ՏՀԶԿ-ի կողմից: Հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/sites/87cc3773-en/index.html?itemId=/content/component/87cc3773-en

ժամկետը սկսում է գործել նրա վերադարձին հաջորդող աշխատանքային օրվանից: Բոլոր դեպքերում, խնդրո առարկա օբյեկտը կմնա այն ստացած պաշտոնատար անձի պատասխանատվության ներքո, որը պետք է ապահովի դրա պահպանումն ու անվտանգությունը մինչև նվերի ճակատագրի որոշումը,

2. եթե նվերը պետք է ընդգրկվի **Պետության ազգային ակտիվներում,** կառույցի բարձրագույն մարմինը, որտեղ աշխատում է այն պաշտոնյան, որին տրվել է նվերը, որոշում է նվերի հետագա ճակատագիրը՝ նվերի մասին տեղեկանալուց հետո քսանհինգ (25) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվի առնելով նվերի բնույթը: Նվերի ճակատագիրը որոշելու լիազորությունը կարող է վերապահվել այն պաշտոնյային, որի զբաղեցրած պաշտոնը ցածր չէ Ազգային կամ Գլխավոր տնօրենի պաշտոնից:

Նվերների գրանցամատյանում ներառվում են հետևյալ տեղեկությունները.

- պետական պաշտոնյայի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթուղթը և պաշտոնը, որին տրվել է նվերը.
- պետական պաշտոնյայի կողմից ստացված ապրանքը կամ ծառայությունը, ներառյալ՝ սպառվող ապրանքները.
- կառավարության, ֆիզիկական կամ իրավաբանական անձի նույնականացումը, որը տրամադրել է այն.
- նվերի ստացման ամսաթիվը,
- համատեքստը, իրադարձությունը կամ գործողությունը, որի շրջանակներում ստացվել է նվերը, ինչպես նաև այդ իրադարձության կամ գործողության տեղի ունենալու վայրը:

Երրորդ անձանց կողմից ֆինանսավորվող ուղևորությունների կամ կեցության ծախսերը

Պետական պաշտոնյաները երրորդ անձանց կողմից կարող են ընդունել ճանապարհածախսի և/կամ կեցության ծախսերը միայն հետևյալ դեպքերում.

1. համաժողովների, դասընթացների, ակադեմիական կամ մշակութային միջոցառումների անցկացման կամ դրանց մասնակցության համար.

2. երբ նշված ֆինանսավորումը կատարվում է կառավարություններից, կազմակերպություններից կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից, որոնք ընդգրկված չեն նման ծախսեր հոգալու սուբյեկտների ցանկում *(ցանկը մանրամասնած է կարգի 4-րդ հոդվածի ա), բ), գ), դ) և ե) մասերում).*
3. եթե դրանք դա անհամատեղելի չեն պաշտոնից բխող գործառույթների հետ կամ արգելված չեն հատուկ կանոնակարգերով:

Պաշտոնյաները, որոնք ստանում են այս օգուտները, պետք է դրանք **հաշվառեն երրորդ անձանց կողմից ֆինանսավորվող ուղևորությունների մասին ռեեստրում:**

Երրորդ անձանց կողմից ֆինանսավորվող ուղևորությունների մասին ռեեստրում հաշվառվում են հետևյալ տեղեկությունները.

- պետական պաշտոնյայի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթուղթը և պաշտոնը, որին տրվել է նվերը.
- կառավարությունը, կազմակերպությունը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը ֆինանսավորել է ճանապարհորդությունը և/կամ կեցությունը.
- միջոցառումը, որին պաշտոնյան մասնակցել է, ինչպես նաև նրա մասնակցության ֆորմատը (բնույթը),
- միջոցառման վայրը, մեկնարկի և ավարտի ամսաթվերը.
- և վերաբերելի լինելու դեպքում՝ պետությունը հոգացել է ծախսերի մի մասը, ապա համապատասխան վարչական ակտը, որով որոշված էր այդ ծախսերի կատարումը:

ՄԵՔՍԻԿԱ

Մեքսիկայում գործում է նվերների գրանցամատյան: Մեքսիկայի Հանրային կառավարման նախարարության էթիկայի բաժինը մշակել է հակիրճ փաստաթուղթ, որտեղ ուրվագծվել են այն հիմնական հատկանիշները, որոնցից պետք է կազմված լինեն գործառնական օրենսգրքերը՝ տարբեր օրենսգրքերի միջև համապատասխանությունը ապահովելու և նախարարություններին դրանց մշակման գործում աջակցելու համար: Բացի

այդ, էթիկայի բաժինը վերանայում է բոլոր էթիկայի կանոնագրքերը՝ ապահովելու դրանց համապատասխանությունը էթիկայի ընդհանուր կանոններին[30]:

Ըստ Մեքսիկայի կառավարության՝ նվերների գրանցամատյանը գործում է միայն այն դեպքում, երբ պաշտոնյաներն իրականում գրանցում են իրենց ստացած նվերները: Փորձելու համար, թե որ տեսակի հաղորդագրություններն են հայտարարատու անձանց համար առավել ազդեցիկ՝ նվերների գրանցման կանոնները պահպանելու նպատակով, Մեքսիկայի Հանրային կառավարման նախարարությունը հետազոտական կենտրոնի հետ համատեղ դաշտային փորձ է անցկացրել:

Երբ նախարարությունը հիշեցման նամակներ ուղարկեց պաշտոնատար անձանց, որով պահանջվում էր գրանցել իրենց ստացած նվերները, նրանք պատահականության սկզբունքով փոխեցին հաղորդագրության տեքստերը: Ըստ այդմ, ուղարկվել են հինգ տարբեր տեսակի հիշեցման հաղորդագրություններ.

- **Իրավական:** *Դուք պարտավոր է գրանցել ստացած նվերները:*
- **Ազնվություն:** *Մենք ճանաչում ենք Ձեր՝ որպես պաշտոնյայի ազնվությունը: Ձեզանից պահանջվում է գրանցել նվերները: Ցույց տվե՛ք Ձեր ազնվությունը:*
- **Անաչառություն:** *Նվերների ստացումը կարող է վտանգել Ձեր անաչառությունը: Երբ նվեր եք ընդունում, գրանցե՛ք այն:*
- **Սոցիալական:** *Ձեր գործընկերների կողմից տարեկան կատարվում է ավելի քան 1000 գրանցում: Ցուցաբերե՛ք նույն վարքագիծը նաև Դուք:*
- **Պատասխանատվություն:** *Նվերը ընդունելու և դրան մասին չհայտնելու դեպքում, այդ մասին կարող է հայտնել այլ անձ: Ձեզ մի պատժե՛ք: Գրանցե՛ք ձեր նվերները:*

Հետազոտությունը նաև անդրադարձ է կատարել Սուրբ Ծննդյան տոներին (սա համարվում է նվերների ստացման ակտիվ շրջան) գրանցված նվերների քանակին՝ այն համեմատելով նախորդ տարիների արդյունքների հետ: Բացի այդ, համեմատական վերլուծություն է արվել՝ պարզելու, թե քանի՞ տոկոսն են կազմել այն պաշտոնյաները, որոնք Սուրբ Ծննդյան տոներին գրանցամատյանում գրանցել են ստացած նվերները՝ առանց

[30] Արգենտինայի հանրային սեկտորում բարեվարքության մշակույթի ձևավորում: Հրապարակված է ՏՀՁԿ-ի կողմից:

հիշեցման հաղորդագրություններ ստանալու: Հետազոտությունը ցույց է տվել, որ փոփոխված տեքստով հիշեցման հաղորդագրությունները ունեցել ազդեցություն և դրանք նպաստել են նվերների գրանցման թվի ավելացմանը:

Հետազոտությունը նաև ցույց է տվել, որ որոշ հաղորդագրություններ ավելի արդյունավետ էին, քան մյուսները: Մասնավորապես, **պաշտոնյաներին՝ իրենց իրավական պարտավորությունների մասին հիշեցնելը և նրանց անաչառության ու ազնվության մասին կոչով դիմելը խրախուսում է ավելի շատ պաշտոնյաների գրանցել նվերները**, քան գործընկերների կողմից նվերների մասին հայտնած տեղեկությունները կամ կիրառվող պատժամիջոցները[31]:

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Թագավորությունում նվերների և հյուրընկալության (հյուրասիրության) հետ կապված կարգավորումները սահմանված են Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի ընդունած նվերների և հյուրընկալության (հյուրասիրության) գրանցամատյանի մասին կարգով, որում թարմացումներ և փոփոխություններ կատարվել են 2022 թվականի հունիսի 29-ին[32]: Այս փաստաթուղթը հիմնված է «Կաշառակերության դեմ պայքարի մասին» Միացյալ Թագավորության օրենքի վրա, որն ընդունվել է 2010 թվականին: Ի լրումն, քաղաքականությունը հիմնված է նաև Քաղաքացիական ծառայության կանոնագրքի[33], Հանրային ֆինանսների կառավարման[34], Հանրային կյանքի յոթ սկզբունքներ վրա (Nolan Principles – համարվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց էթիկական

---

[31] Արգենտինայի հանրային սեկտորում բարեվարքության մշակույթի ձևավորում: Հրապարակված է ՏՀԶԿ-ի կողմից:

[32] Միացյալ Թագավորության Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի ընդունած նվերների և հյուրընկալության (հյուրասիրության) գրանցամատյանի մասին կարգ: Վերջին թարմացումները և փոփոխությունները կատարվել են 2022 թվականի հունիսի 29-ին: Հասանելի է՝ https://assets.publishing.service.gov.uk/media/62ceace88fa8f50bfe0edc20/04_RPC_Gifts_and_Hospitality_Register_July_2022.pdf

[33] Միացյալ Թագավորության Քաղաքացիական ծառայության կանոնագիրք: Հասանելի է՝ https://www.gov.uk/government/publications/civil-service-code/the-civil-service-code

[34] Հանրային ֆինանսների կառավարման սկզբունքներ: Հասանելի է՝ https://www.gov.uk/government/publications/managing-public-money

չափանիշները)[35] և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի[36] հիմնարար սկզբունքների վրա:

Նվերի կամ հյուրասիրության և այլ ծառայությունների ցանկացած առաջարկ (օրինակ՝ ճանապարհորդություն, որն առաջարկվում է ծառայության դիմաց), լինի դա բանավոր, էլեկտրոնային փոստով կամ նամակով առաջարկված, և լինի դա՝ ընդունված, մերժված կամ չստացված, պետք է գրանցվի Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի նվերների և հյուրընկալության մասին ռեեստրում (գրանցամատյանում)՝ 3 օրվա ընթացքում: (**Ռեեստրի ձևաթուղթը ներկայացված է Աղյուսակ 1-ում:)**

Նյութական արժեք ունեցող և հյուրընկալության (հյուրասիրության) հետ կապված բոլոր ծախսերը, որն ընդունում է պաշտոն զբաղեցնող անձը իր պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում (բացառությամբ՝ պատահական իրավիճակներից, ինչպիսիք են՝ թեյի կամ սուրճի հյուրասիրությունը), պետք է հաշվառվի վերը նշված ռեեստրում:

Այս դրույթի միակ բացառությունը արտերկրում կամ Միացյալ Թագավորությունում արված հյուրընկալության այն ծախսերն են, որոնք կապված են դիվանագիտական առաքելության հետ (օրինակ՝ օտարերկրյա կառավարության կամ միջազգային հաստատության կողմից կազմակերպված ընդունելությունը) և Նորին Մեծության կառավարության կողմից կազմակերպված միջոցառմանը մասնակցությունը (օրինակ՝ հատուկ առիթ նշելու նպատակով հրավիրված պաշտոնական ընթրիքը):

Կարգի համաձայն՝ նվերի կամ հյուրընկալության (հյուրասիրության) հետ կապված որևէ ծախսի **չհաշվառումը** համարվում է **կարգապահական խախտում**: Գնումների, ներառյալ՝ պայմանագրերի կառավարման հետ կապված անձնակազմը նույնպես տեղեկացված է, որ նվերի կամ հյուրընկալության (հյուրասիրության) հետ կապված ծախսերի առաջարկների գրանցումը, անկախ նրանից՝ **այդ առաջարկը ընդունված է, թե՝ ոչ, պարտադիր ենթակա է հաշվառման:**

---

[35] Հանրային կյանքի յոթ սկզբունքներ (Nolan Principles): Հասանելի է https://www.gov.uk/government/publications/the-7-principles-of-public-life

[36] Կորպորատիվ կառավարման կանոնագիրք: Հասանելի է՝ https://www.gov.uk/government/publications/corporate-governance-code-for-central-government-departments

Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովը (Regulatory policy committee)

Միացյալ Թագավորությունում այս կառույցն է հանդիսանում նվերների կամ հյուրընկալության (հյուրասիրության) հետ կապված ծախսերի գրանցումն իրականացնող և վերահսկող մարմինը: Այն անկախ մարմին է, որը ֆինանսավորվում է Միացյալ Թագավորության Բիզնեսի և առևտրի դեպարտամենտի կողմից[37]: Հանձնաժողովը կազմված է մի շարք ոլորտների անկախ փորձագետներից, ներառյալ՝ մասնավոր և կամավոր ոլորտները, բիզնեսը, իրավաբանական և ակադեմիական հանրույթը[38]: Հանձնաժողովի անդամները նշանակվում են բաց մրցույթի արդյունքներով, որը կազմակերպվում է Հանրային նշանակումների մասին կառավարման կանոնագրքին համապատասխան[39]: Հանձնաժողովին նաև է աջակցում է քաղաքացիական ծառայողների քարտուղարությունը, որը կազմված է տնտեսագետներից, քաղաքականության խորհրդատուներից և հետազոտողներից:

---

[37] Միացյալ Թագավորության Բիզնեսի և առևտրի դեպարտամենտի վեբ կայք՝ https://www.gov.uk/government/organisations/department-for-business-and-trade

[38] https://www.gov.uk/government/organisations/regulatory-policy-committee/about

[39] Հանրային նշանակումների մասին կառավարման կանոնագիրք: Հասանելի է՝ https://www.gov.uk/government/publications/governance-code-for-public-appointments

Աղյուսակ 1. Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի նվերների և հյուրընկալության մասին ռեեստր

Անուն, Ազգանուն	**Էլ. փոստ**	**Նվերի առաջարկի ամսաթիվը**	**Նվերը ընդունելու/ մերժելու/ ստանալու ամսաթիվը**	**Հաշվառման փաստացի ամսաթիվը – առաջարկելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում**	**Նվերը, հյուրընկալության հետ կապված ծախսերը**	**Միջոցառմանը ուղեկցող ամուսինը/ զուգընկերը/ ընկերը**	**Նվեր հանձնողը/ հյուրընկալության կազմակերպիչը**	**Արժեքը (ֆունտ սթեռլինգով)**	**Արդյունքը/ Արդյո՞ք նվերը/ հյուրընկալությունը մերժվել կամ ընդունվել է, ընդունման պատճառն ու անհրաժեշտության դեպքում՝ թույլտվությունը**
Ստեֆան Գիբսոն	Իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի նախագահ regulatoryenquirie	25/1/2022	25/1/2022	6/3/2022	Հնդկական իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի ֆորումի շրջանակներում անցկացված դասախոսության դիմաց հոնորար	Ոչ	Հնդկական իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովը	45 ֆունտ սթեռլինգին համարժեք 4500 հնդկական ռուփի,	Սթիվեն Գիբսոնին առաջարկվել է 4,500 հնդկական ռուփիի չափով հոնորար՝ Հնդկական իրավական ոլորտի քաղաքականությունը կարգավորող հանձնաժողովի կողմից 2022 թվականի հունվարի 15-ին կազմակերպված առցանց դասախոսություն անցկացնելու համար: Նա խնդրեց, որ հոնորարարը նվիրաբերվի

	s@rpc.gov.uk								հանձնաժողովի ընտրությամբ հնդկական մանկական կրթական բարեգործական կազմակերպության: Հանձնաժողովը այն նվիրաբերել է Հնդկաստանի Ժպիտ բարեգործական հիմնադրամին: Նախագահը չի ընտրել բարեգործական հիմնադրամը և որևէ առնչություն չունի դրա հետ:

ԱՎՍՏՐԱԼԻԱ

Ավստրալիայի հանրային ծառայության գործակալությունների ղեկավարների նվերների հաշվառման գրանցամատյան

Համաձայն նվերների և օգուտների (առավելություններ) վերաբերյալ Ավստրալիայի հանրային ծառայության գործակալությունների ղեկավարների համար **մշակված ուղեցույցի**, որը հրապարակվել է 2021 թվականի նոյեմբերի 30-ին, և վերջին անգամ թարմացվել է 2023 թվականի հոկտեմբերի 20-ին, գործակալությունների ղեկավարները երբեմն կարող են նվերներ և օգուտներ ստանալ անձանցից և կազմակերպություններից՝ իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս[40]:

Գործակալությունների ղեկավարները պարտավոր են **հրապարակայնորեն բացահայտել** բոլոր նվերները կամ օգուտները, որոնք ընդունվել և գնահատվում են 100,00 ավստրալիական դոլարից ավել (առանց GST-ի (ապրանքների և ծառայությունների հարկ), այսուհետ տեքստում՝ GST): Պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում գործակալությունների ղեկավարների կողմից ընդունված նվերների և օգուտների մասին հաշվետվությունը/գրանցումը նպաստում է ապահովել Ավստրալիայի հանրային ծառայության գործակալությունների նկատմամբ հանրության վստահությունը և բարեվարքությունը:

Գործակալության ղեկավարները պետք է՝

- յուրաքանչյուր եռամսյակ իրենց գործակալության կամ ստորաբաժանման վեբ կայքում հրապարակել իրենց նվերների և օգուտների գրանցամատյանը, որոնց արժեքը գերազանցում է 100,00 ավստրալիական դոլարը (առանց ապրանքների և ծառայությունների հարկի).
- Ավստրալիայի հանրային ծառայության հանձնաժողովին տրամադրել գործակալության ղեկավարի նվերների և օգուտների գրանցամատյանի էլեկտրոնային հղումները՝ Հանձնաժողովի կայքում հրապարակելու համար.

---

[40] Ավստրալիայի հանրային ծառայության գործակալությունների ղեկավարների համար մշակված ուղեցույց: Հրապարակվել է 2021 թվականի նոյեմբերի 30-ին: Վերջին անգամ թարմացվել է 2023 թվականի հոկտեմբերի 20-ին: Հասանելի է՝ https://www.apsc.gov.au/working-aps/integrity/integrity-resources/guidance-agency-heads-gifts-and-benefits#receipt-of-hospitality

- գործակալության ընթացակարգերին համապատասխան հավաքել և պահպանել անհրաժեշտ տեղեկատվությունը և կառավարել իրենց գրանցամատյանը.
- նվեր կամ օգուտ ստանալուց հետո 31 օրվա ընթացքում թարմացնել (update) գրանցամատյանը.
- նվերների և օգուտների գրանցամատյանում հրապարակել գործակալությունների ղեկավարների կողմից հաշվետու ժամանակահատվածում նվերներ չընդունելու մասին «զրոյական» հայտարարագիր:

Եթե նույն անձի կողմից պարբերաբար նվերները կամ օգուտները ցածր են սահմանված շեմից, սակայն ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան 100.00 Ավստրալիական դոլարը (առանց ապրանքների և ծառայությունների հարկի), այդ նվերները կամ օգուտները նույնպես գրանցվում են գրանցամատյանում:

Հյուրընկալությունը կամ դրա հետ կապված ծախսերի ընդունումը

Հյուրընկալությունը կամ դրա հետ կապված ծախսերը կարող են ընդունվել, եթե դրանք կապված են գործակալության ղեկավարի ծառայողական պարտականությունների հետ: 100.00 Ավստրալիական դոլարը (առանց ապրանքների և ծառայությունների հարկի) գերազանցող հյուրընկալության հետ կապված ծախսերը, որոնք են ընդունվել են և կարող են առաջացնել իրական կամ ենթադրյալ շահերի բախման իրավիճակ, պետք է գրանցվեն գրանցամատյանում:

Ինչպես է հրապարակվում ընդունված նվերները և օգուտները

Գործակալության ղեկավարները ստեղծում և ապահովում են որպեսզի ընդունված նվերներն ու օգուտները հաշվառվեն համապատասխան մատյանում[41]: (**Մատյանի ձևաթուղթը ներկայացված է Աղյուսակ 2-ում:)**

[41] Ավստրալիայի հանրային ծառայության գործակալությունների ղեկավարների համար մշակված ուղեցույց: Հրապարակվել է 2021 թվականի նոյեմբերի 30-ին: Վերջին անգամ թարմացվել է 2023 թվականի հոկտեմբերի 20-ին: Հասանելի է՝ https://www.apsc.gov.au/working-aps/integrity/integrity-resources/guidance-agency-heads-gifts-and-benefits

Գործակալության ղեկավարները պետք է թարմացնեն 100.00 ավստրալիական դոլարից ավելի արժողությամբ ընդունված բոլոր նվերների և օգուտների իրենց գրանցամատյանը (առանց ապրանքների և ծառայությունների հարկի)՝ նվերը կամ օգուտը ստանալուց հետո 31 օրվա ընթացքում: Եթե գործակալության ղեկավարները հաշվետու ժամանակահատվածում նվերներ չեն ընդունել, նվերների և օգուտների գրանցամատյանում պետք է ներառվի «զրոյական» հայտարարություն: Գրանցամատյանները պետք է հրապարակվեն եռամսյակը մեկ անգամ՝ մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 30-ը, հուլիսի 31-ը, հոկտեմբերի 30-ը և հունվարի 31-ը, ինչպես նշված է ստորև Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Եռամսյակային հաշվետվություն և հրապարակման պարբերաշրջան

Հաշվառման ժամանակահատվածը	**Հաշվառումների հրապարակման ամսաթիվը**
Հոկտեմբերի 1 - Դեկտեմբերի 31	Հունվարի 31
Հունվարի 1 - Մարտի 31	Ապրիլի 30
Ապրիլի 1 – Հունվար 30	Հուլիսի 31
Հուլիսի 1 – Սեպտեմբերի 30	Հոկտեմբերի 31
Գրանցամատյանը պետք է թարմացվի նվերը կամ օգուտը ստանալուց՝ 31 օրվա ընթացքում	

Աղյուսակ 2. Ընդունված նվերների և օգուտների գրանցման մատյան

Գրանցման ձևանմուշ

*Որպես [**նշել Գործակալության անվանումը**] գործակալության ղեկավար՝ իմ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ես ստացել եմ հետևյալ նվերները և/կամ օգուտները, որոնց արժեքը գերազանցում է սահմանված շեմը, այն է՝ 100.00 Ավստրալիական դոլարը (առանց ապրանքների և ծառայությունների հարկի).*

Ստանալու ամսաթիվը	Հաշվառելու ամսաթիվը	Նվերը/ Օգուտը/ Ծառայությունը	Ստացողը (նշել գործակալության կոնտակտային անձի անունը, եթե այն ստացել է գործակալությունը և ոչ թե ղեկավարը՝ անմիջականորեն)	Նվիրողի անունը կամ կազմակերպության անվանումը, երկիրը	Պատճառը, առիթը	Մոտավոր արժեքը Ավստրալիական դոլարով (մեծածախ արժեքը ծագման երկրում կամ ընթացիկ շուկայական արժեքը Ավստրալիայում)

Ավստրալիայի ազգային ոստիկանական գործակալությունը[42], որը իրավապահ մարմին է և գործում է Գլխավոր դատախազության պորտֆոլիոյում, հիմնվելով Ավստրալիայի հանրային ծառայության գործակալությունների ղեկավարների համար մշակված ուղեցույցի վրա, իրենց մոտ ևս ներդրել են նվերների և օգուտների հաշվառման գրանցամատյան: Այն հրապարակային է և հասանելի է գործակալության կայքում[43]: Հաշվառման ենթակա տեղեկությունների շրջանակը նույնանման է գործակալությունների ղեկավարների համար մշակված մատյանի հետ:

Ավստրալիայի բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձանց նվերների հաշվառման գրանցամատյան

Ավստրալիայի հանրային ծառայության գործակալությունների ղեկավարների համար նախատեսված **նվերների գրանցամատյանից զատ**, ներդրվել է նաև առանձին **նվերների ուղեցույց**[44], որը վերաբերում է Ավստրալիայի վարչապետին, նախարարներին, խորհրդարանական քարտուղարներին, նրանց ընտանիքի անդամներին, նախարարների և նրանց նախընտրական շտաբերի աշխատակազմին, որոնք իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում նվեր(ներ) են ստանում: Այս ուղեցույցով նախատեսված են հիշյալ պաշտոնատար անձանց նվերների հաշվառման ռեեստր:

Բոլոր աղբյուրներից, այդ թվում **մասնավոր և պետական սեկտորից** (պետական աղբյուրներ են համարվում Ավստրալիայի կամ օտարերկրյա կառավարությունները ազգային, նահանգային կամ տեղական մակարդակներում, ինչպես նաև այդ կառավարություններում պաշտոն զբաղեցնող անձինք) ստացված նվերների նկատմամբ, անկախ նրանից դրանք տրվել են արտասահմանում կամ Ավստրալիայում, կիրառվում են նշված ուղեցույցի դրույթները:

Ուղեցույցով նախատեսված է նաև թույլատրելի նվերի սահմանները: Ըստ այդմ՝

- կառավարության աղբյուրներից ստացված նվերների սահմանը $750.00 ավստրալիական դոլար է,

---

[42] Ավստրալիայի ազգային ոստիկանական գործակալության վեբ կայքը՝ https://www.afp.gov.au/about-us/our-agency

[43] Ավստրալիայի ազգային ոստիկանական գործակալության ծառայողների նվերների գրանցման գրանցամատյան: Հասանելի է՝ https://www.afp.gov.au/about-us/governance-and-accountability/obligations/gifts-and-benefits

[44] Ավստրալիայի բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձանց նվերների հաշվառման գրանցամատյանի ուղեցույց: Հասանելի է՝ https://www.pmc.gov.au/government/official-gifts/guidelines-relating-official-gifts-received

- մասնավոր աղբյուրներից՝ $300.00 ավստրալիական դոլար։

Այս սահմանաչափերը վերաբերում են նվիրողի (դոնորի) կողմից նվեր ստացողին տրված մեկ կամ մեկից ավելի ապրանքների արժեքին, որոնք տրվել են **միանվագ կերպով։**

Պաշտոնական նվերի արժեքը գնահատվում է հետևյալի հիման վրա.

- Նվիրատուի ծագման երկրում նվերի մեծածախ (հարկից ազատված) արժեքը և փոխանակված ավստրալիական դոլարի ընթացիկ փոխարժեքը։
- Նվերի ընթացիկ շուկայական արժեքը Ավստրալիայում (առանց GST-ի)։

Նվերի պահպանումը

Նախատեսված սահմանաչափի շրջանակներում գտնվող նվերների դեպքում այն կարող է պահպանվել ստացողի կողմից, եթե դրա անհատական արժեքը չի գերազանցում թույլատրելի սահմանը։ Եթե նվեր ստացողը չի ցանկանում պահել թույլատրելի նվերները, ապա նվերը ստացող պաշտոնյայի ստորաբաժանումը պատասխանատու է այդ իրերի օգտագործման համար։

Նախատեսված սահմանաչափի գերազանցման դեպքում նվերը կարող է պահպանվել ստացողի կողմից, եթե նա ընտրում է նվերը գնելու տարբերակը՝ վճարելով թույլատրելի սահմանաչափի և նվերի արժեքի տարբերությունը, ինչպես նաև GST-ը։

Օրինակ՝

Ծագման երկրից նվերի մեծածախ արժեքը՝ **950.00 ավստրալիական դոլար (պետական/կառավարական աղբյուրից)**	
Նվերի արժեքը՝ 950.00 ավստրալիական դոլար	
Հանել թույլատրելի սահմանը՝ 750.00 ավստրալիական դոլար	
200.00 ավստրալիական դոլար +	
Ավելացնել 10% GST՝ 20.00 ավստրալիական դոլար	
Վճարման ենթակա ընդհանուր գումարը՝ 220.00 ավստրալիական դոլար	
Նվերի մանրածախ արժեքը՝ **850.00 ավստրալիական դոլար (մասնավոր աղբյուրից)**	
Նվերի արժեքը՝	850.00 ավստրալիական դոլար
Բաժանել 1,1%*- ի՝	772.73 ավստրալիական դոլարի վրա
Հանել թույլատրելի սահմանը՝ 300.00 ավստրալիական դոլար	
Ընդամենը՝	472.73 ավստրալիական դոլար

Ավելացնել 10% GST-ը՝	47.27 ավստրալիական դոլար
Վճարման ենթակա ընդհանուր գումարը՝ 520.00 ավստրալիական դոլար	
*** = Մանրածախ արժեքը 1.1%-ով բաժանելիս ստացվում է նվերի մեծածախ արժեքի իրական պատկերը։**	

Եթե նվեր ստացողը ցանկանում է գնել թույլատրելի սահմանաչափից ավել արժեք ունեցող նվերը, ապա վերջինս պետք է.

- լրացնի հայտարարագրի ձևանմուշը (ներկայացված է Աղյուսակ 4-ում),
- կցի նվերի արժեքի/գնահատման գործընթացի ապացույց,
- կցի անձնական կտրոն կամ դրամական անդորրագիր, որով պետք է վճարվի գանձապետարան՝ այն գումարի չափով, որը համարվում է թույլատրելի նվերի սահմանի և նվերի արժեքի, ներառյալ՝ GST-ի, տարբերությունը։ Որպես այլընտրանք, կարելի է կցել Վարչապետի և Կաբինետի դեպարտամենտին կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագիր՝ էլեկտրոնային ֆոնդերի փոխանցման (EFT) համակարգով փոխանցում կատարելու համար։

Նվերների վերադարձը

Եթե նվերը գերազանցում է թույլատրելի շեմը, և այն ստացողը չի ցանկանում գնել նվերը, ապա վերջինս վերադարձնում է նվերը Վարչապետի և Կաբինետի դեպարտամենտ։ Ցանկացած առաջարկ, որը կվերաբերի նվերի տնօրինման հետագա ճակատագրին, պետք է նշվի կից հայտարարագրով, որում վերջինս իր հրաժարվում է նվերի նկատմամբ սեփականության իրավունքի ցանկացած պահանջից, ինչպես նաև ներկայացնում է նվերի հետագա ճակատագրի վերաբերյալ իր առաջարկությունը։ Նվերների վերադարձի հայտարարագրի ձևանմուշը ներկայացված է Աղյուսակ 4-ում։

Թույլատրելի շեմը գերազանցող նվերների հայտարարագիրը

Ցանկացած աղբյուրից ստացված ցանկացած նվեր, որը գերազանցում է թույլատրելի արժեքի շեմը, ենթակա է հայտարարագրման։ Հայտարարագրումը կատարվում է Արժեքի սահմանաչափը գերազանցող պաշտոնական նվերի հայտարարագրի ձևանմուշը լրացնելու միջոցով, որը ներկայացվում է Վարչապետի և

Կաբինետի դեպարտամենտ։ Նվերների հայտարարագրի ձևանմուշը ներկայացված է Աղյուսակ 4-ում։

Հայտարարագիրը լրացվում է թույլատրելի սահմանաչափը գերազանցող նվերը ստանալուց հետո 28 օրվա ընթացքում կամ նվերի արժեքի պաշտոնական գնահատումը ստանալուց անմիջապես հետո (մանրամասները ներկայացված են ուղեցույց բաժին 7-ում)։ Հայտարարագրերը ուղարկվում են էլեկտրոնային փոստով՝ AOG@pmc.gov.au հասցեով։

Այն դեպքում, եթե առաջացել է անհրաժեշտություն գնահատել, թե արդյոք նվերը գերազանցում է թույլատրելի սահմանը, ապա այն փոխանցվում է փոխանցվում է գնահատողին՝ ստանալուց հետո 28 օրվա ընթացքում։

Ստացված նվերների փոխանցման կամ տնօրինման կարգը

Վարչապետի և Կաբինետի դեպարտամենտին հանձնվող նվերները կարող են՝

- փոխառությամբ փոխանցվել Նախարարների/Խորհրդարանական քարտուղարների գրասենյակներին, Համագործակցության կառավարության գրասենյակներին։ Դրանք կվերադարձվեն Վարչապետի և Կաբինետի դեպարտամենտին՝ նախարարի/խորհրդարանական քարտուղարի թոշակի անցնելու կամ կառավարության փոփոխության դեպքում,
- սեփականության իրավունքով փոխանցվել Համագործակցության վարչություններին, Ազգային հավաքածուների պահպանման հաստատություններին, ներառյալ՝ թանգարաններին, պատկերասրահներին, գրադարաններին, արխիվներին, կրթական կամ համայնքային կենտրոններին,
- նվիրաբերվել նոմինացված (առաջադրված) ոչ առևտրային կամ բարեգործական կազմակերպությանը՝ նվեր ստացողի ու Վարչապետի և Կաբինետի դեպարտամենտի հայեցողությամբ,
- պատշաճ ձևով տնօրինվում է Նախարարների/Խորհրդարանական քարտուղարների դեպարտամենտի կողմից՝ տնօրինման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով Վարչապետի և Կաբինետի դեպարտամենտին։

Աղյուսակ 4. Պաշտոնական նվերի հայտարարագրի ձևանմուշ

Պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում ստացվել է հետևյալ նվերը և դրա արժեքը գերազանցում է նվերի թույլատրելի արժեքի շեմը՝ $750.00 ավստրալիական դոլար պաշտոնական (կառավարական) աղբյուրից կամ $300.00 ավստրալիական դոլար մասնավոր աղբյուրից:
Նվեր/ Նվերներ (իր/իրեր կամ ծառայություն/ ծառայություններ). …….
Ստացող՝ Անուն, Ազգանուն ……. Պաշտոն՝ ……
Նվիրող՝ Անուն, Ազգանուն ……. Պաշտոն (Զբաղվածություն)՝ ……
Առիթը՝ ……
Ամսաթիվը՝ ……
Արժեքը՝ (մեծածախ արժեքը ծագման երկրում կամ ընթացիկ շուկայական արժեքը Ավստրալիայում, առանց GST-ի ……

Անհրաժեշտ է լրացնել «Ա» կամ «Բ» բաժինները

Ա. Նվերի պահպանում	**Բ. Նվերի հանձնում**
Ես ցանկանում եմ պահել այս նվերը: Կից ներկայացվում է՝ ☐ գնահատման վկայականը (կամ գնահատման գործընթացի մանրամասները) ☐ կտրոնը, որով պետք է վճարվի գանձապետարան՝ …… գումարի չափով, և որը համարվում է թույլատրելի նվերի սահմանի և նվերի արժեքի, ներառյալ՝ GST-ի, տարբերությունը, կամ ☐ դուրս գրված հաշիվ-ապրանքագիրը՝ էլեկտրոնային ֆոնդերի փոխանցման (EFT) համակարգով փոխանցում կատարելու համար: *Կոնտակտային տվյալներ* Անուն, Ազգանուն …… Կոնտակտային մանրամասներ՝ …… Ստորագրվել է՝ …… Նվեր ստացող՝ …… Ամսաթիվ՝ ……	Ես ցանկանում եմ հանձնել այս նվերը Վարչապետի և Կաբինետի դեպարտամենտին և հրաժարվել նվերի նկատմամբ սեփականության իրավունքի ցանկացած պահանջից: Սույն նվերի հետագա ճակատագրի վերաբերյալ իմ առաջարկությունն է՝ ☐ նվիրաբերել բարեգործական կամ ոչ առևտրային կազմակերպությանը ☐ նվիրաբերել Ազգային հավաքածուների պահպանման հաստատություններին, օրինակ՝ թանգարանին, գրադարանին, պատկերասրահին ☐ ցուցադրել Համագործակցության/ Խորհրդարանի գրասենյակում Մեկնաբանություններ՝ …… Ստորագրվել է՝ …… Նվեր ստացող՝ …… Ամսաթիվ՝ ……

ՍԻՆԳԱՊՈՒՐ

Սինգապուրում նվեր ընդունելու վերաբերյալ իրավական կարգավորումների համաձայն՝ պետական պաշտոնյան պետք է մերժի նվերի ընդունումը: Եթե վերջինիս նվեր է տալիս պաշտոնական այցելությունների ընթացքում բարձրաստիճան պաշտոնյան, ապա նա ընդունում է նվերը և այն հանձնում իր վերադաս դեպարտամենտի պետին:

Այն դեպքում, երբ պաշտոնյան ցանկանում է տնօրինել նվերը, ապա տեղի է ունենում նվերի գնահատում, որի հիման վրա պաշտոնյան կատարում է վճարում և տնօրինում է այն:

Միևնույն ժամանակ, **նախարարներից** պահանջվում է **մերժել և վերադարձնել բոլորի տեսակի նվերները**: Այդուհանդերձ, այն դեպքում, եթե առկա է այնպիսի իրավիճակ, որպիսի պայմաններում նվերի վերադարձը կարող է վիրավորել նվիրատուին, ապա նախարարը նվերը **հանձնում է Նախարարի նախարարության մշտական քարտուղարին՝ դրա տնօրինման նպատակով**: Եթե նախարարը ցանկանում է **գնել նվերը**, այս դեպքում նույնպես կատարվում է գնահատում, որից հետո նախարարը կարող է գնել այն: Իսկ եթե նվերի արժեքը ցածր է 50 դոլարից, ապա պաշտոնյան կարող է պահել նվերը՝ առանց դրա դիմաց վճարման:

Եթե մշտական քարտուղարը գտնում է, որ նվերը գտնվում է կառավարության հետաքրքրությունների շրջանակում, ապա նվերը կարող է **ցուցադրվել կամ պաշտոնապես օգտագործման հանձնվել նախարարության տարածքում:** Նույն կանոնները գործում են պաշտոնական այցերի ընթացքում նվերների փոխանակման դեպքում[45]:

[45] https://www.unodc.org/documents/corruption/Publications/2020/Preventing-and-Managing-Conflicts-of-Interest-in-the-Public-Sector-Good-Practices-Guide.pdf էջ 23:

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում կարևորագույն նշանակություն ունի հանրային ծառայության բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործումը: Հանրային ծառայության բարեվարքության համակարգը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (**այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ**), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը[46]: Բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործումը պահանջում է վերը նշված սկզբունքների և կանոնների, ինչպես նաև շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունելու սահմանափակումների և այլ սահմանափակումների վերաբերյալ կարգավորումների կատարելագործում, արդյունավետ գործադրման, վերահսկման մեխանիզմների ուժեղացում:

Այս տեսլականի իրագործման նպատակով, մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերում ներառվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների **պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված** նվերների հանձնման, ռեեստրի մշակման և ներդրման հանձնառություն:

Մասնավորապես, **Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակներում ՀՀ 2022-2024 թվականների գործողությունների ծրագրում** ներառված է 10 հանձնառություն, որոնք խմբավորված են ըստ ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթ ուղղությունների: «Իրավունք և արդարություն» առաջնահերթ ուղղության 6 ենթաուղղություններից մեկը նվիրված է «Կոռուպցիայի դեմ պայքար՝ կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ»

[46] Տե՛ս «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՀ ՀՕ-206-Ն օրենք: Հոդված 21: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189406

ոլորտին, որի բաղադրիչը ներառում է, երկու հանձնառություն: Հանձնառություններից թվով յոթերորդը վերաբերում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստրին[47]:

Հանձնառության կարճ նկարագիրը: Բարեվարքության համակարգի բաղադրիչ հանդիսացող նվերների ինստիտուտի կարգավորման նպատակով հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանում, ինչպես նաև նվերների հաշվառման և հանձնման կարգի առնչությամբ անհրաժեշտ կարգավորումների նախատեսում, մասնավորապես՝ նվերների հայտարարագրման թվայնացված ռեեստրի ստեղծում, որը կապահովի նվերների հայտարարագրման, դրանց գնահատման, ինչպես նաև տեղեկատվության հրապարակման ավտոմատացված լուծումներ:

Հանձնառության կատարման համար նախատեսված է երկու հիմնական գործողություն: Դրանք են՝

1. Օրենսդրական կարգավորումների նախագծի մշակում: Սահմանել օրենքով սահմանված դեպքերում պետության սեփականությունը դարձող նվերների տնօրինման վերաբերյալ կարգավորումներ՝ նախատեսելով նվերների տնօրինման եղանակները, տնօրինման եղանակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու վերաբերյալ կարգավորումներ: Ավարտման ակնկալվող ամսաթիվը՝ 2022 թ. սեպտեմբեր-2024 թ. ապրիլ:
2. Էլեկտրոնային ռեեստրի ստեղծում. Փոխգործելիության ապահովում, և ներդրում: Ավարտման ակնկալվող ամսաթիվը՝ 2024 թ. սեպտեմբեր:

Հանձնառությամբ ակնկալվող արդյունքները: Ի թիվս այլնի, ակնկալվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայողը պարտավոր կլինեն իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում: Նվերների թվայնացված ռեեստրի ստեղծումը կապահովի նվերների հայտարարագրման, դրանց գնահատման, տեղեկատվության հրապարակման ավտոմատացված լուծումներ, ինչպես նաև կապահովի համակարգի փոխգործելիությունը հայտարարագրերի թվային համակարգի հետ:

---

[47] Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան նախաձեռնության շրջանակներում ՀՀ 2022-2024 թվականների գործողությունների ծրագիր: Հասանելի է՝ https://ogp.gov.am/hy/commitments/33

ՀՀ կառավարությունը 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշմամբ հաստատել է **ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը** (այսուհետ՝ Ռազմավարություն)[48]: Ռազմավարության Նպատակ 1-ը վերաբերում է Կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության համակարգերի ամրապնդմանը, որի ներքո նախատեսված ռազմավարական ուղղություններից է բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործումը: Ըստ այդմ, համապատասխան գործողություններ նախատեսված են նաև Ռազմավարության գործողությունների ծրագրում, որոնք վերաբերում են նվերների ինստիտուտի զարգացմանը, այդ թվում նաև՝ նվերների ռեեստրի ստեղծմանը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների ինստիտուտի և նվերների հանձնման գործընթացի ուղղությամբ իրականացված գործողությունները

«Հանրային ծառայության մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները: Հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի համաձայն՝

«6. Եթե սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված նվերի (այս կետը վերաբերում են հետևյալ նվերների տեսակներին. 1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը. 2) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը. 3) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով. 4) օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները) *արժեքը (բացառությամբ 1-ին կետով նախատեսված՝ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է վաթսուն հազար ՀՀ դրամը, ապա այն* ***համարվում է պետական կամ համայնքային սեփականություն:***

[48] ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1871-Լ որոշում, որով հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674

Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն ***հանձնել պետությանը կամ համայնքին****:*

9. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողն ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա հանրային ծառայողը սահմանված կարգով անմիջապես, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը, քննիչը՝ համապատասխան մարմնում գործող Էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե նվերը, բարեվարքության հարցերով կազմակերպչի, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, Էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն, հանդիսանում է սույն հոդվածի իմաստով թույլատրելի չհամարվող, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է ապահովել, որ ստացված նվերը վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը ***հանձնել պետությանը կամ համայնքին****»:*

Այսպիսով, 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերով սահմանված դեպքերում հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց տրված նվերները դառնում են պետական կամ համայնքային սեփականություն: Օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ սահմանված ժամկետում նվերը վերադարձնելու կամ համարժեք հատուցում վճարելու անհնարինության դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը կամ համայնքին:

Այսպիսով, հիշյալ կարգավորումների ուժով, հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերները իրենց մոտ պահելը, այսինքն՝ չհանձնելը, դիտարկվում է անթույլատրելի:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ վերը նշված հիմքերով պետական կամ համայնքային սեփականություն դարձած նվերների տնօրինման հետ կապված առանձնահատուկ կարգավորումներ դեռևս նախատեսված չեն: Միակ գործող և կիրառելի կարգավորումը սահմանված է 29-րդ հոդվածի 6-րդ մասում, ըստ որի՝ նշված գույքը տնօրինվում է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով կամ ՏԻՄ-ի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այս կապակցությամբ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը[49], որը առաջին ընթերցմամբ 11.12.2023 թվականին ընդունվել է ՀՀ ազգային ժողովի (ԱԺ) կողմից[50]:

Ըստ նախագծի՝ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքում նախատեսվում է ավելացնել «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինումը» վերտառությամբ 25.1-ին հոդվածը: Ըստ այդմ՝ ՀՀ-ին հանձնված գույքը կարող է տնօրինվել հետևյալ եղանակներով.

1) այն նվեր ստացած հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը թողնելով՝ որոշակի ժամկետով, սակայն ոչ ավել, քան մինչև վերջինիս պաշտոնից ազատվելը կամ ծառայությունը դադարեցնելը, կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը հանձնելով.
2) մշակութային արժեք համարվող գույքը՝ մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաները և ստեղծագործությունները, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն, ինչպես նաև գրավոր հուշարձանները, պետական կամ համայնքային

---

[49] «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ: Հասանելի է՝
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14482&Reading=1
http://www.parliament.am/draftreading_docs8/K-695-3_DR2.pdf

[50] «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին պատմությունը հասանելի է՝
http://www.parliament.am/draft_history.php?id=14482

թանգարաններին հանձնելով կամ ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկելով.

3) շուտ փչացող գույքը, կենդանիները, պահպանման էական ծախսեր պահանջող գույքն անհապաղ իրացնելով, իսկ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում՝ ոչնչացնելով (շուտ փչացող գույքի դեպքում) կամ Կառավարության որոշմամբ սահմանված այլ եղանակով տնօրինելով.

4) այն քննարկվող օրենքով սահմանված կարգով հրապարակային սակարկություններով իրացնելով.

5) գույքը քննարկվող օրենքով սահմանված կարգով նվիրաբերելով:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի հիման վրա ՀՀ-ին հանձնված գույքն ամրացվում է Կոմիտեին և տնօրինվում վերջինիս կողմից՝ «Պետական արարողակարգի մասին» օրենքով նախատեսված դեպքերում հիմք ընդունելով Պետական արարողակարգի ծառայության եզրակացությունը:

Նախագծով առաջարկվում է նաև 29-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա ՀՀ սեփականություն դարձած գույքն իրացնել հրապարակային սակարկություններով կամ այն նվիրաբերելով: Պահպանման էական ծախսեր պահանջող գույքը և կենդանիներն իրացվում են անհապաղ, իսկ շուտ փչացող գույքն իրացվում է անհապաղ կամ ոչնչացվում՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով: Հիշյալ ենթաօրենսդրական ակտը կառավարության կողմից նախատեսվում է մշակել օրենքի ընդունումից հետո: Կառավարության կողմից մշակվելու է նաև գույքի (նվերի) տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը և տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված եզրակացության տրամադրման կարգը:

Նախագծով սահմանված է նաև, որ ՀՀ սեփականությունը դարձած թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված նվերները տնօրինվելու են «Թանկարժեք մետաղների մասին» օրենքով սահմանված կարգով:

Պետական գույքի օտարումից ստացված դրամական միջոցները, օտարման գործարքների հետ կապված ծախսերը, այդ թվում՝ պահպանության, որոնց գումարը չի կարող գերազանցել գույքի վաճառքի գինը, ՀՀ կառավարության սահմանած կարգով

փոխհատուցելուց հետո ուղղվում են ՀՀ պետական բյուջե և համապատասխան համայնքների բյուջեներ:

Համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսված են «Պետական արարողակարգի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-291-Ն օրենքում[51] և «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքում[52]:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների ինստիտուտի և նվերների ռեեստրի ներդրման գործընթացի ուղղությամբ իրականացված գործողությունները

2022 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխությունների արդյունքում նախատեսվեցին կարգավորումներ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղությամբ: Թույլատրելի նվերի արժեք է սահմանվել 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը[53]: Միևնույն ժամանակ, նվերներ ընդունելու սահմանափակումների իրացման կառուցակարգերը ամբողջությամբ ամրապնդված չեն, նվերների հաշվառման կառուցակարգերը թերի են, **դեռևս ձևավորված չէ նվերների ռեեստրը**:

Այսպես, «Հանրային ծառայության մասին օրենքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն[54] օրենքի ընդունմամբ վերանայվեց հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային

---

[51] «Պետական արարողակարգի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-291-Ն օրենքում լրացում կատարելու մասին նախագիծ: Հասանելի է՝
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14486&Reading=1
http://www.parliament.am/draft_history.php?id=14486

[52] «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ: Հասանելի է՝
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14485&Reading=1
http://www.parliament.am/draft_history.php?id=14485

[53] ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարություն: Էջ 6: Հասանելի է՝
https://www.arlis.am/Annexes/7/2023_N1871hav.1.pdf

[54] «Հանրային ծառայության մասին օրենքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենք: Հասանելի է՝
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172230

ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքին առնչվող իրավակարգավորումները: Ի թիվս այլ կարգավորումների նշված օրենքով սահմանվեց, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները **հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում** (այսուհետ՝ Ռեեստր): ՀՕ-540-Ն Օրենքի ուժով նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերի, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկի, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգեր, ինչպես նաև խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույցի սահմանման լիազորությունները վերապահվեցին ԿԿՀ-ին[55]:

Ի կատարումն հիշյալ փոփոխությունների, 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ԿԿՀ-ի թիվ 01-Ն որոշմամբ սահմանվեց հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը[56] (այսուհետ՝ Որոշում): Այս Որոշմամբ փաստացի կարգավորվում է միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից միայն **թույլատրելի ստացված** նվերները, **արգելված նվերների կամ դրանց առաջարկների հաշվառումը**, որոնք թեև չեն ընդունվել այս սուբյեկտների կողմից, Որոշմամբ **նախատեսված չեն**:

Համաձայն Որոշման՝ նվերների հաշվառման ռեեստրը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ **<u>ստացված նվերների</u>**

---

[55] Տե՛ս նույն տեղում, հոդված 5:

[56] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 01-Ն որոշումը՝ Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը հաստատելու մասին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188181

<u>հաշվառման</u> թվային համակարգ։ Միաժամանակ, այս հասկացության շրջանակներում նախատեսված չէ, թե արդյո՞ք ռեեստրը հանրային է, թե՞ ոչ, չնայած այն հանգամանքին, որ 01-Ն որոշման Հավելված 2-ի՝ *«Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխություններ կատարելու մասին» կարգի* 4-րդ կետի համաձայն՝ նվերների հաշվառման ձևաթուղթը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից Ռեեստրում լրացվելուց հետո հինգերորդ օրը **հրապարակվում է** ԿԿՀ-ի պաշտոնական կայքէջում, իսկ 5-րդ կետի համաձայն՝ հաշվառման ենթակա նվերների վերաբերյալ տեղեկությունները **հրապարակային են**՝ բացառությամբ նվերների վերաբերյալ Ռեեստրում առկա ՀՀ օրենսդրությամբ պաշտպանվող տեղեկությունների։

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում նրանց կողմից լրացված նվերների հաշվառման ձևաթուղթը **մնում է հրապարակված Ռեեստրում**՝ լիազորությունների դադարման կամ դադարեցման օրվանից հետո՝ **երեք տարվա ընթացքում**։ Երեք տարվա ընթացքում հանրային ծառայության կամ հանրային **պաշտոն կրկին չստանձնելու դեպքում**՝ նվերների հաշվառման ձևաթուղթն Հանձնաժողովի կողմից **արխիվացվում է Ռեեստրում**։ Այդ ժամկետից հետո տվյալ անձի կողմից հանրային ծառայության կամ հանրային պաշտոն ստանձնելու դեպքում նրա կողմից նախկինում հաշվառված՝ արդեն իսկ արխիվացված նվերների հաշվառման ձևաթղթերը **վերականգնվում և հրապարակվում են**։

Անդրադառնալով հաշվառման ենթակա նվերների ցանկին, հարկ է նշել, որ համաձայն Որոշման՝ **40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման**, բացառությամբ նույն աղբյուրից վեց ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (հինգ և ավելի) բնույթ կրող դեպքերի։ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն և Որոշմամբ՝ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից **հրապարակային կարգով տրվող արարողակարգային նվերները նույնպես հաշվառման ենթակա չեն**։ Որոշմամբ հրապարակային են համարվում առնվազն մեկ զանգվածային լրատվական միջոցի (ԶԼՄ) կողմից կամ հանրային իշխանության մարմնի պաշտոնական կայքէջում լուսաբանված դեպքերը։

Որոշմամբ նախատեսված է նաև նվերների **գնահատման կարգը**։ Գների որոշման նպատակով թույլատրվում է օգտվել էլեկտրոնային և առկա առևտրային բոլոր հարթակներից (օրինակ՝ amozon, e-bay, taobao, ozon, wildberries, ՀՀ կամ արտերկրում գործող առևտրի կամ ծառայությունների մատուցման այլ հարթակներ)։ Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ անձի կողմից նվերի արժեքի որոշումը հնարավոր չէ կամ անձը դժվարանում է որոշել նվերի արժեքը, այդ մասին գրավոր կարգով տեղեկացնում է ԿԿՀ-ին՝ համապատասխան աջակցություն ստանալու նպատակով։ Այն դեպքերում, երբ բաց աղբյուրներով և հանրամատչելի տեղեկատվությամբ հնարավոր չէ որոշել ապրանքի արժեքը, ԿԿՀ-ը կարող է Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) հետ համագործակցության միջոցով օգտագործել ՊԵԿ-ի կողմից կիրառվող ապրանքի գնի որոշման մեթոդը։ Նվերների արժեքը գնահատելու համար, անհրաժեշտության դեպքում, ԿԿՀ-ը կարող է դիմել և ստանալ անկախ փորձագիտական եզրակացություն։

Որոշման Հավելված 3-ը, որով սահմանված է *Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը,* նախատեսում է լրացնել՝

Նվերը հանձնողի վերաբերյալ հետևյալ տվյալները.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, աշխատանքի վայրի անվանումը,
- իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, երկիրը, որտեղ գրանցված է, գործունեության ոլորտը (ոլորտները)։

Նվերի վերաբերյալ հետևյալ տվյալները.

- նվերի դասակարգումը՝ պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերներ կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրություն, ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութեր, կրթաթոշակ, դրամաշնորհ կամ նպաստ, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերներ, այլ նվերներ,
- նվերի տեսակը՝ գույք, ծառայություն, կատարված աշխատանք, հյուրասիրություն, ներված պահանջ, արտոնյալ փոխառություն,

պահանջի զիջում, դրամական միջոց (այդ թվում՝ կրիպտոարժույթ), գույքի անհատույց օգտագործում, այլ օգուտ կամ առավելություն,

- նվերի հակիրճ նկարագիրը,
- նվերի՝ ստացողի կողմից գնահատված արժեքը,
- նվերը ստանալու օրը, ամիսը, տարին,
- նվերը ստանալու հանգամանքը (օրինակ՝ միջոցառման անվանում, գործուղում, աշխատանքային այց, հայտարարված մրցույթ և այլն),
- այլ մանրամասներ կամ լրացուցիչ տեղեկություններ։

Նվերների հաշվառման ձևաթուղթը լրացնելու ամսաթիվը։

Նվերների հաշվառման ձևաթղթին կից ներկայացվում են նաև.

- նվերի լուսանկարը (հնարավորության դեպքում՝ երեք հարթությունից արված լուսանկարներ՝ ներառելով տեխնիկապես բնութագրող տվյալները, օրինակ՝ ապրանքանիշը, մոդելը, արտադրման կամ թողարկման տարեթիվը և այլն), կամ
- նվերը հաստատող այլ փաստաթղթեր (օրինակ՝ ծառայությունների մատուցման պայմանագիր, փոխառության պայմանագիր, միջոցառումների հրավերներ, տոմսեր),
- նվերի գնի որոշման համար օգտագործված ինտերնետային տիրույթի բաց աղբյուրների կամ գների վերաբերյալ հանրամատչելի տեղեկությունների լուսանկարները կամ նվերի գինը հավաստող այլ փաստաթղթեր։

Նվերների հաշվառման ձևաթղթում լրացվող տվյալներից հրապարակման ենթակա են հետևյալ տվյալները.

1) *հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի վերաբերյալ հետևյալ անձնական տվյալները՝*
    - անունը, ազգանունը, հայրանունը,
    - ծննդյան օրը, ամիսը, տարին,
2) *հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ հետևյալ տվյալները՝*
    - մարմնի անվանումը,

- զբաղեցրած պաշտոնը,
- պաշտոնի ստանձնման ամսաթիվը,
- լիազորությունների դադարման կամ դադարեցման ամսաթիվը (վերաբերելի դեպքերում),

3) *նվերը հանձնողի վերաբերյալ հետևյալ տվյալները՝*
   - ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, աշխատանքի վայրի անվանումը,
   - իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, երկիրը, որտեղ գրանցված է, գործունեության ոլորտը (ոլորտները),
4) *նվերի վերաբերյալ հետևյալ տվյալները.*
   - նվերի դասակարգումը՝ պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերներ կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրություն, ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութեր, կրթաթոշակ, դրամաշնորհ կամ նպաստ, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերներ, այլ նվերներ,
   - նվերի տեսակը՝ գույք, ծառայություն, կատարված աշխատանք, հյուրասիրություն, ներված պահանջ, արտոնյալ փոխառություն, պահանջի զիջում, դրամական միջոց (այդ թվում՝ կրիպտոարժույթ), գույքի անհատույց օգտագործում, այլ օգուտ կամ առավելություն,
   - նվերի հակիրճ նկարագիրը,
   - նվերի՝ ստացողի կողմից գնահատված արժեքը,
   - նվերը ստանալու օրը, ամիսը, տարին,
   - նվերը ստանալու առիթը (օրինակ՝ միջոցառման անվանում, գործուղում, աշխատանքային այց, հայտարարված մրցույթ և այլն),
   - այլ մանրամասներ կամ լրացուցիչ տեղեկություններ։
5) *նվերների հաշվառման ձևաթուղթը լրացնելու ամսաթիվը։*

Ինչպես նշվեց վերևում, Ռեեստրը դեռևս պատրաստ չէ: Ըստ ԿԿՀ-ի՝ նվերների հաշվառման թվային Ռեեստրի կառուցման նպատակով ԿԿՀ-ը պայմանագրային բանակցությունների մեջ է գործընկեր կազմակերպության հետ[57]:

Միաժամանակ, մինչև նվերների հաշվառման թվային Ռեեստրի գործարկումը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացվող թույլատրելի նվերների հաշվառումը ապահովելու նպատակով, ԿԿՀ-ը մշակել և հաստատել է նվերների հաշվառման ձևաթուղթ՝ Excel ֆորմատով[58]: Ձևաթղթի հետ միասին, ԿԿՀ-ն հրապարակել է նաև ձևաթուղթը լրացնելու 1.07 բոպե տևողությամբ տեսաձայնագրության ուղեցույց[59]: Ուղեցույցը ներկայացնում է Excel ձևաթղթի հետ աշխատելու տեխնիկական որոշ կանոններ, սակայն այն **չի ներկայացնում բովանդակային ուղենիշեր**՝ այն լրացնող սուբյեկտների համար:

Նվերներ ընդունելու կամ **հաշվառելու սահմանված կարգը** խախտելու համար փոփոխություններ կատարվեցին ՎԻՎՕ-ում, որով սահմանվեցին **վարչական պատասխանատվության միջոցներ** (հոդված 166.1): Փոփոխությունները ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարից: Ըստ այդմ, հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից իր ընտանիքի անդամների կամ իր հետ փոխկապակցված անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված նվերների ստացման մասին չհայտնելու, չհաշվառելու կամ սահմանված կարգի խախտմամբ հաշվառելու համար նախատեսված են հետևյալ պատասխանատվության միջոցները.

- **նվերների ստացման մասին դիտավորությամբ չհայտնելու կամ սահմանված կարգի խախտմամբ հայտնելը** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի

---

[57] Հիշյալ տեղեկությունը ԿԿՀ-ի ներկայացուցիչը հայտնել է 2024 թվականի հունվարի 23-ին՝ տեղի ունեցած առցանց ֆոկուս խմբային քննարկման շրջանակներում, որը վերաբերում էր ԲԿԳ Հայաստանի 2022-2024թթ. Գործողությունների ծրագրի «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստր» հանձնառությանը: Հասանելի է՝ https://armla.am/51488.html

[58] Նվերների հաշվառման ձևաթուղթ՝ Excel ֆորմատով: Հասանելի է՝
https://docs.google.com/spreadsheets/d/1aMgb9COLCaWp_FiV0NxM8gEhgi9WU_SV/edit#gid=32881248
http://cpcarmenia.am/hy/news/item/2024/01/05/1/

[59] Նվերների հաշվառման ձևաթուղթը լրացնելու տեսաձայնագրության ուղեցույց: Հասանելի է՝
https://drive.google.com/file/d/16GC5pRsamWIGsS4iyH5zOokAWhTVTFgx/view

հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով՝ նվեր ստացված առարկայի բռնագրավմամբ, կամ նվեր ստացված առարկայի բռնագրավման անհնարինության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի՝ ընդունման պահին գործող արժեքի հնգապատիկի չափով (ՎԻՎՕ, հոդված 166.1, մաս 2),

- **նվերները չհաշվառելը** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով՝ նվեր ստացված առարկայի բռնագրավմամբ, կամ նվեր ստացված առարկայի բռնագրավման անհնարինության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի՝ ընդունման պահին գործող արժեքի եռապատիկի չափով (ՎԻՎՕ, հոդված 166.1, մաս 3),
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված **նվերները սահմանված ժամկետների կամ կարգի խախտմամբ հաշվառելը՝** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով՝ նվեր ստացված առարկայի բռնագրավմամբ, կամ նվեր ստացված առարկայի բռնագրավման անհնարինության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի՝ ընդունման պահին գործող արժեքի կրկնապատիկի չափով:

Ուսումնասիրելով 2023 թվականի ԿԿՀ-ի հաղորդումները, պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակահատվածում ԿԿՀ-ի կողմից **նվերների ընդունման սահմանափակումների մասով** հարուցվել է երեք վարույթ՝ ՎԻՎՕ 166.1-րդ հոդված 1-ին մասով նախատեսված, այն է՝ նվերներ ընդունելու սահմանափակումների խախտման հիմքով: Այս հոդվածի այլ մասերով նախատեսված զանցանքների վերաբերյալ վարույթներ չեն հարուցվել[60]:

Հարկ է նաև նշել, որ փոփոխություններ և լրացումներ են նախատեսվում «Հանրային ծառայության մասին» օրենքում: Նախագիծը 2023 թվականի դեկտեմբերի 11-ին ընդունվել

[60] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի երկրորդ կիսամյակի հաղորդում: Հասանելի է՝ http://cpcarmenia.am/files/legislation/1253.pdf

է առաջին ընթերցմամբ[61]: Նախագծի ընդունման պարագայում *«Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված դեպքերում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների հաշվառումն իրականացնելու է Պետական արարողակարգային ծառայությունը:* Նախատեսված է նաև, որ *կարող են սահմանվել առանձնահատկություններ՝ պետական մարմիններում առանձին պաշտոնների կամ առանձին պաշտոն զբաղեցնող անձանց կողմից հաշվառվող նվերների վերաբերյալ հրապարակվող տեղեկությունների սահմանափակման անհրաժեշտությամբ պայմանավորված:*

Նվերների հաշվառման և հանձնման դրույթների տարածումը՝ դատավորների, դատախազների և պատգամավորներ նկատմամբ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող* ***վարքագծի կանոնները*** *սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած* ***վարքագծի կանոնագրքով****:*

2. Պատգամավորի, դատավորի, դատախազի, քննիչի ***վարքագծի կանոնները*** *սահմանվում են այլ իրավական ակտերով:»:*

ԿԿՀ-ի մասին օրենքի[62] 24-րդ հոդվածի համաձայն՝

«ԿԿՀ-ի լիազորություններից է՝

22) ***ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց*** *(բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի*

---

[61] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ: Հասանելի է՝ http://www.parliament.am/draftreading_docs8/K-687-1_DR2.pdf
http://www.parliament.am/draft_history.php?id=14485

[62] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ ՀՕ-96-Ն օրենք: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271

վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց ***վարքագծի կանոնները (կանոնագիրքը).***

23) ***ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը.***

25) ***ամփոփում է*** *անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների,* ***վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների****, ինչպես նաև շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման* ***պրակտիկան****, ներկայացնում դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկություններ.»:*

ԿԿՀ-ը 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ 02-Ն որոշմամբ սահմանել է Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը[63]:

ԿԿՀ-ը 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 01-Ն որոշմամբ սահմանվել է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները[64]:

Ե՛վ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքում, և հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններում ընդգրկված է նաև նվերների ընդունման արգելքի և սահմանափակումների կանոնները: Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների 48-րդ կետով նախատեսված է, որ հանրային ծառայողը պարտավոր է բոլոր դեպքերում, բացառությամբ՝ սահմանված շեմը չգերազանցող արժեք ունեցող թույլատրելի նվերների, վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր **տեղեկացնել** ստացված նվերի, այդ թվում՝ ոչ նյութական առավելության մասին: Այսպիսով, հիշյալ երկու փաստաթղթերից որևէ մեկում ԿԿՀ-ի 2023 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 01-Ն որոշումը ընդունելուց հետո **փոփոխություններ կատարված չեն** և **թույլատրված, ստացված նվերների հաշվառումը և հանձնումը** նախատեսված չեն վարքագծի կանոնագրքում և վարքագծի կանոններում:

---

[63] ԿԿՀ-ի 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ 02-Ն որոշումը Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189669

[64] ԿԿՀ-ի 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 01-Ն որոշումը Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններ հաստատելու մասին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164523

Անդրադառնալով դատավորների, ԲԴԽ-ի անդամների, դատախազների և պատգամավորների նկատմամբ նվերների հաշվառման կանոններին կիրառելիությանը, ապա պետք է նշել, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«1. Դատավորի վարքագծի կանոնները սահմանվում են **սույն օրենսգրքով** և **պարտադիր են** բոլոր դատավորների համար: 2. Դատավորի **վարքագծի կանոնները պարտադիր են նաև** Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատավորի թեկնածուի հավակնորդների, դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակներում ընդգրկված անձանց, ինչպես նաև դատարանի աշխատակազմի համար այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են նրանց նկատմամբ:»:* Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածը նվիրված է դատավորի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումներ: Հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *նվերները **տնօրինվում են** «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով*, իսկ 12-րդ մասի համաձայն՝ ***նվերների հաշվառման և հանձնման կարգը** սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը*[65]: Այսպիսով, դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների (ԲԽԴ) նկատմամբ կիրառվում են ԿԿՀ-ի 2023 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 01-Ն որոշմամբ սահմանված նվերների հաշվառման դրույթները, իսկ տնօրինման մասով կտարածվեն նաև «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխված և լրացված դրույթները:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածը նվիրված է դատախազի վարքագծի ընդհանուր կանոններին: Հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ *դատախազը պարտավոր է պահպանել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ նվերներ ընդունելու սահմանափակումները*[66]:

Այսպիսով, թեև հոդվածի տառացի մեկնաբանությունից հնարավոր է ենթադրել, որ դատախազների նկատմամբ **կիրառվում են միայն նվերներ ընդունելու սահմանափակումները**, որոնք կարգավորված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածով՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները», սակայն ձևավորված պրակտիկան հուշում է,

---

[65] «Դատական օրենսգիրք» ՀՀ ՀՕ-95-Ն սահմանադրական օրենք: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188762

[66] «Դատախազության մասին» ՀՀ ՀՕ-198-Ն օրենք: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190367

որ նվերների հաշվառման կարգավորումները, որոնք նախատեսված են օրենքի նույն օրենքի հոդված 30-ով, նույնպես տարածվում է դատախազների նկատմամբ։

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի հոդված 4.1-ը նվիրված է պատգամավորի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումներին, որի համաձայն՝ *«Պատգամավորի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝* ***նվերներ ընդունելու սահմանափակումները****։»*[67]։ Նվերների հաշվառման մասով դատախազությանը վերաբերող հատվածում նշված պրակտիկան ձևավորված է նաև պատգամավորների դեպքում։ Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ չնայած ԳՐԵԿՈ-ի հանձնարարականին՝ ըստ որի առաջարկել է *ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով* ***հստակ ուղղորդում կապահովվի*** *շահերի բախման և հարակից ոլորտներին, մասնավորապես՝* ***նվերների և այլ առավելությունների ընդունմանը,*** *(…),* պատգամավորների վարքագծի կանոնագիրք առկա չէ։

Նվերների հաշվառման և հանձնման վիճակագրությունը

ԿԿՀ-ի մասին օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ *ԿԿՀ-ի լիազորություններից է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների,* ***վարքագծի կանոնների*** *խախտումների, շահերի բախման դեպքերի* ***վիճակագրության վարումը*** *և* ***տվյալներ հրապարակումը****։* ԿԿՀ-ի 2023 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 01-Ն որոշման 4 -րդ կետի համաձայն՝ նվերների հաշվառման նպատակներից է՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացած նվերների հաշվառման վիճակագրության ձևավորմանը նպաստելը։ Ուսումնասիրելով ԿԿՀ-ի տարեկան հաղորդումները, պարզ է դառնում, որ ԿԿՀ-ն ներկայացնում է վիճակագրական տվյալներ վարքագծի կանոնների խախտումների, այդ թվում նվերների սահմանափակման հետ կապված։ Միևնույն ժամանակ, այդ վիճակագրական տվյալները բավականին սահամանափակ են և իրենց բնույթով չեն կարող նպաստել նվերների հաշվառման

[67] «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ ՀՕ-20-Ն օրենք։ Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172253

վիճակագրության ձևավորմանը, ինչպես նաև հանրային վերահսկողության իրականացմանը:

Ինչ վերաբերում է նվերների հանձնման վիճակագրությանը, ապա «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում[68] նվերների հանձնման վիճակագրության վարման կարգավորումներ նույնպես նախատեսված չեն:

Այս մասով հարկ է նշել, որ ՏՁՀԿ-ի (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի Ուկրաինայի 5-րդ փուլի պիլոտային զեկույցի շրջանակներում նախատեսված էր *Հենանիշ 2.3.3-ը,* որը պահանջում էր հետևյալը. *Շահերի բախման և* ***այլ հակակոռուպցիոն սահմանափակումների*** *(օրինակ՝* ***նվերների, անհամատեղելիության*** *(...) հետ կապված սահմանափակումներ) կատարողականի վերաբերյալ* ***մանրամասն վիճակագրություն****, որը* ***հրապարակվում է պարբերաբար***[69]:

[68] «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ: Հասանելի է՝
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14482&Reading=1
http://www.parliament.am/draftreading_docs8/K-695-3_DR2.pdf

[69] ՏՀՁԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: Էջ 34:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում ներկայացված եզրակացությունները հիմնված են միջազգային ստանդարտների ու միջազգային փորձի, ինչպես նաև նվերների հանձնման և ռեեստրի իրավակարգավորումների օրենսդրության և առկա պրակտիկայի վերլուծության վրա։

Ա) Նվերների ռեեստրի և իրավակարգավորումների վերաբերյալ եզրակացություններ

1. ԳՐԵԿՈ ստանդարտներից մեկը վերաբերում է նշյալին՝ *i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով* ***հստակ ուղղորդում կապահովվի*** *շահերի բախման և հարակից ոլորտներին, մասնավորապես՝* ***նվերների և այլ առավելությունների ընդունմանը,*** *(…)։*

   Այսպես, պատգամավորների վարքագծի կանոնագիրքը, որը կներառեր համապատասխան ուղեցույցներ շահերի բախման և բարեվարքության *(որը ընդգրկում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումներ)* վերաբերյալ, **դեռևս առկա չէ**։

2. *ԳՐԵԿՈ-ի մեկ այլ ստանդարտով առաջարկվում է պատգամավորների կողմից էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու համար՝ i) էթիկայի կանոնների և անհամատեղելիության դեպքերի ու լրացուցիչ գործունեության, շահերի բախման և* ***նվերների ընդունման*** *վերաբերյալ կանոնների* ***անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողությունը****, ii) համապատասխան* ***պատասխանատվության ենթարկելու միջոցով կանոնների կատարումը****։*

   Ըստ ՏՀԶԿ և ԳՐԵԿՈ-ի՝ խորհուրդ է տրվում սահմանել նվերների հետ կապված առավել խիստ կարգավորումներ, որոնք կապահովեն նվերների ***հաղորդումների (հաշվառումների) հստակ գործիքներ (եղանակներ) և տեղեկատվության հրապարակայնություն****, այլ կերպ ասած՝* ***հանրությանը հասանելի նվերների ռեեստր,*** *ինչպես նաև համապատասխան ուղեցույց՝ որով*

կսահմանվի ստացած բոլոր տեսակի նվերների (օգուտների) հետ պատշաճ վարվելու կանոններ։

Այսպես, նվերների ընդունման վերաբերյալ անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողության համակարգերից և գործիքներից է հանդիսանում նվերների հաշվառման թվային Ռեեստրի, որը **դեռևս չի գործարկվում**։ Միևնույն ժամանակ, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացվող թույլատրելի նվերների հաշվառումը ապահովելու նպատակով, ԿԿՀ-ը **մշակել և հաստատել է** նվերների հաշվառման ձևաթուղթ։

ՎԻՎՕ-ում կատարված փոփոխությունների ուժով նվերներ ընդունելու կամ **հաշվառելու սահմանված կարգը խախտելու** համար **սահմանվել են վարչական պատասխանատվության միջոցներ** հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար։

3. *ՏՀԶԿ-ի հենանիշ 2.3.2-ը վերաբերում է հետևյալին. «Հատուկ դեպքերով, շահերի բախման վերաբերյալ ներկայացված հաղորդումների լուծման մասին տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է առցանց»։ Այս հենանիշը պահանջում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների ընդունման կարգավորումների շրջանակներում սահմանվի պահանջ առ այն, որ կենտրոնական (միասնական) մարմինը կամ առանձին գերատեսչությունները* ***հանրայնացնեն նշված պաշտոնյաների կողմից ստացված նվերները։*** *Այն կարելի է իրականացնել այնպիսի գործիքների միջոցով, ինչպիսիք են* ***հանրությանը հասանելի նվերների գրանցամատյանները կամ առցանց հրապարակման այլ գործիքները****, որոնք պետք է պարբերաբար հրապարակվեն կամ թարմացվեն առցանց՝ կենտրոնական (միասնական) մարմնի կամ առանձին գերատեսչության կողմից։ Միևնույն ժամանակ, այս հենանիշը չի կարող ներառվել ակտիվների և շահերի հայտարարագրման շրջանակներում, որտեղ պահանջվում է ներկայացնել ստացված նվերները, քանի որ դրանք սովորաբար* ***չեն ներառում որոշակի արժեքից բարձր «արգելված» նվերները, որոնք պաշտոնյաները պարտավոր են հաշվառել և հանձնել պետությունը։***

Բացի այդ, ըստ միջազգային փորձի՝ նվերի կամ հյուրասիրության և այլ ծառայությունների ցանկացած առաջարկ, լինի դա՝ ***բանավոր, էլեկտրոնային***

*փոստով կամ **նամակով** առաջարկված, և լինի դա՝ **ընդունված, մերժված** կամ **չստացված**, պետք է գրանցվի նվերների և հյուրընկալության մասին ռեեստրում։*
Այսպես, 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ԿԿՀ-ի թիվ 01-Ն որոշմամբ սահմանվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը։ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և այս Որոշմամբ կարգավորվում է միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից միայն **թույլատրելի, ստացված** նվերները, իսկ **արգելված նվերների կամ դրանք առաջարկելու վերաբերյալ հաշվառումը**, որոնք թեև չեն ընդունվել այս սուբյեկտների կողմից, Որոշմամբ **նախատեսված չեն**։

4. *Ըստ ՏՀԶԿ և ԳՐԵԿՈ ստանդարտների, ինչպես նաև միջազգային փորձի՝ հաշվառման են ենթակա **թույլատրելի և արգելված նվերները։***
Այսպես, համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման՝ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից **հրապարակային կարգով տրվող արարողակարգային նվերները հաշվառման ենթակա չեն։** Որոշմամբ հրապարակային են համարվում առնվազն մեկ զանգվածային լրատվական միջոցի կողմից կամ հանրային իշխանության մարմնի պաշտոնական կայքէջում լուսաբանված դեպքերը։

5. *Ըստ ՏՀԶԿ-ի և ԳՐԵԿՈ-ի ստանդարտների՝ նվերների հաշվառման ռեեստրի նպատակներից է՝ ունենալ **անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողություն։** Միաժամանակ, տարբեր զեկույցներով հիշյալ կազմակերպությունները կարևորել են հենց ռեեստրի հրապարակային լինելը։*

Այսպես, Որոշման 4 -րդ կետով, ի թիվս այլնի, նվերների հաշվառման նպատակներն են՝ նպաստել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացած նվերների կառավարման **թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը**: Հրապարակայնության ապահովումը նախատեսված չէ Որոշման նպատակներով:

6. *Միջազգային փորձով առանձնացված են **նվիրողները**՝ ըստ սուբյեկտային կազմի՝ **պետական կամ մասնավոր**: Համապատասխանաբար նախատեսված են նաև **թույլատրելի նվերի տարբեր շեմեր**, կախված այն հանգամանքից, եթե նվերը տրվել է **պետական և մասնավոր կազմակերպությունների կողմից**: Համապատասխան **դասակարգում** նախատեսված է նաև **նվերների հաշվառման ռեեստրում**:*

   Այսպես, Հայաստանում գործում է միասնական կարգավորում թույլատրելի նվերների շեմի համար, այն է՝ (60 000) վաթսուն հազար ՀՀ դրամը, հետևապես՝ նվերների հաշվառման ռեեստրում ներառվող տեղեկությունների շրջանակում համանման դասակարգում նախատեսված չէ:

7. *Ըստ միջազգային փորձի՝ **նվերների հաշվառումը և գնահատումը** իրականացվում է կամ **կենտրոնական (միասնական)** կամ **մի քանի մարմինների** կողմից, որոնց հանրային պաշտոն զբաղեցնող անձինք կամ հանրային ծառայողները հանդիսանում են նվերների հաշվառման գործընթացի սուբյեկտ: Այսպիսով, որպես այդպիսին, հաշվառում իրականացնող մարմնի մասով փորձը տարբեր է. կան երկներ, որոնք նախատեսել են մի քանի մարմիններ (Ավստրալիա, Մոլդովա, Սլովենիա), կան երկրներ, որոնք ունեն կենտրոնական միասնական մարմին (օրինակ՝ Միացյալ Թագավորություն, Արգենտինա):*

   Հայաստանում «Հանրային ծառայության մասին օրենքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի ուժով նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերի, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկի, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների

ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգեր, ինչպես նաև խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույցի սահմանման լիազորությունները **վերապահվեցին ԿԿՀ-ին**:

8. *Միջազգային փորձով նախատեսված է նվերի գնման հնարավորություն: Լատվիայում գնումը թույլատրվում է այն դեպքում, երբ նվերը անհատական օգտագործման ապրանք է, նվեր ստացողը կարող է նախապես գնել այն՝ Կառավարության կողմից սահմանված կարգով: Ավստրալիայում նախատեսված սահմանաչափի գերազանցման դեպքում նվերը կարող է պահպանվել ստացողի կողմից, եթե նա ընտրում է նվերը գնելու տարբերակը՝ վճարելով թույլատրելի սահմանաչափի և նվերի արժեքի տարբերությունը, ինչպես նաև GST-ը: Սինգապուրում, եթե նախարարը ցանկանում է գնել նվերը, կատարում է նվերի գնահատում, որից հետո նախարարը կարող է գնել այն: Մոլդովայում եթե անձը հայտարարում է թույլատրելի նվերը պահելու իր մտադրության մասին, որի արժեքը գերազանցում է սահմանված շեմը, վերջինս իրավունք ունի հետ գնել այն՝ պետական կազմակերպության բյուջե վճարելով սահմանված շեմի և նվերի գնի արժեքի տարբերությունը:*

Այսպես, ՀՀ-ում սահմանված չէ անհատական նվերի հասկացությունը, ինչպես նաև՝ անհատական և թույլատրելի նվերների գնման հնարավորություն: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում նախատեսված է նվերի վերադարձի կամ նվերին համարժեք հատուցում: «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում միայն սահմանված է ՀՀ-ին հանձնված գույքի տնօրինման հնարավորությունը այն նվեր ստացած հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից՝ որոշակի ժամկետով, սակայն ոչ ավել, քան մինչև վերջինիս պաշտոնից ազատվելը կամ ծառայությունը դադարեցնելը, կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը հանձնելով:

9. *ՏՀԶԿ Հենանիշ 2.3.3-ը սահմանում էր հետևյալը. Շահերի բախման և **այլ հակակոռուպցիոն սահմանափակումների** (օրինակ՝ **նվերների,***

անհամատեղելիության (...) *հետ կապված սահմանափակումներ) պրակտիկայի վերաբերյալ* ***մանրամասն վիճակագրություն****, որը* ***հրապարակվում է պարբերաբար****:*

Այսպես, Հայաստանում առկա չէ նվերների հաշվառման և հանձնման մանրամասն վիճակագրություն վարելու կարգ կամ առանձին իրավական ակտ:

10. *Ուսումնասիրված միջազգային ստանդարտները և միջազգային փորձը անդրադարձ չեն կատարում լրացված նվերների հաշվառման ձևաթղթի արխիվացման կարգին:*

Այսպես, ըստ ԿԿՀ-ի Որոշման՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում նրանց կողմից լրացված նվերների հաշվառման ձևաթուղթը **մնում է հրապարակված Ռեեստրում**՝ լիազորությունների դադարման կամ դադարեցման օրվանից հետո՝ **երեք տարվա ընթացքում**: Երեք տարվա ընթացքում հանրային ծառայության կամ հանրային **պաշտոն կրկին չստանձնելու դեպքում**՝ նվերների հաշվառման ձևաթուղթն Հանձնաժողովի կողմից **արխիվացվում է Ռեեստրում**: Այդ ժամկետից հետո տվյալ անձի կողմից հանրային ծառայության կամ հանրային պաշտոն ստանձնելու դեպքում նրա կողմից նախկինում հաշվառված՝ արդեն իսկ արխիվացված նվերների հաշվառման ձևաթղթերը **վերականգնվում և հրապարակվում են**:

Բ) Նվերների ռեեստրի և իրավակարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների և հանրային իրազեկման վերաբերյալ եզրակացություններ

11. ԳՐԵԿՈ ստանդարտներից մեկը վերաբերում է նշյալին՝ *ii) պատգամավորների վարքագծի կանոնագիրքը լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝* ***մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն և իրազեկվածության մակարդակի բարձրացում:***

Այսպես, նվերների՝ որպես վարքագծի կանոնի մաս, համակարգված և խորացված ուսուցում, ինչպես նաև խորհրդատվության իրականացման մեխանիզմներ **չեն ներդրվել**:

12. *ԳՐԵԿՈ-ի կողմից տրվող հիմնական առաջարկներից է՝ վերապատրաստումները և հանրային իրազեկումները՝ ինչպես հանրության շրջանում, այնպես էլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների: Հանրային էթիկայի և կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ ուսուցումներ, ներառյալ՝ գործնական խնդիրների և իրավիճակային դեպքերի լուծում:*

Հայաստանում վերապատրաստումներ անհրաժեշտ է **կազմակերպել հանրային ծառայության բոլոր մակարդակներում**՝ շեշտադրումը դնելով նաև նվերների ինստիտուտի վերաբերյալ գործնական խնդիրների (իրավիճակների) լուծմանը, **իրականացնել իրազեկումներ** Ռեեստրից օգտվելու վերաբերյալ և **չսահմանափակվել** միայն իրազեկման թերթիկներ կամ տեղեկատվական բրոշյուրներ ուղարկելով, կամ **սահմանափակ թվով** մարդկանց վերապատրաստելով (օրինակ՝ չսահմանափակվել միայն բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապատրաստելով՝ ուսուցանողների ուսուցման ձևաչափով)։ Վերապատրաստումների և իրազեկումների թիրախում պետք է լինեն Ռեեստրից օգտվող **յուրաքանչյուր ոք**, սրանում ներառելով նաև ՁԼՄ-ներին և հասարակական կազմակերպություններին, որոնք կիրականացնեն անկախ, շարունակական և հանրային վերահսկողություն։

13. *Ըստ միջազգային փորձի՝ նվերների ռեեստրում հաշվառում իրականացնող սուբյեկտների համար մշակվում են ուղեցույցներ, որտեղ մատչելի կերպով ներկայացվում է՝ ինչպե՞ս լրացնել ռեեստրը, յուրաքանչյուր աղյուսակի ներքո ի՞նչ տեղեկատվություն ներառել: Կան երկրներ, որ նաև հրապարակում են լրացված ձևաթուղթը՝ իբրև ուղենիշ:*

Այսպես, ԿԿՀ-ը մշակել և հաստատել է նվերների հաշվառման ձևաթուղթ Excel ֆորմատով: Ձևաթղթի հետ միասին, ԿԿՀ-ն հրապարակել է նաև ձևաթուղթը լրացնելու 1.07 բոպե տևողությամբ տեսաձայնագրության ուղեցույց։ Ուղեցույցը ներկայացնում է Excel ձևաթղթի հետ աշխատելու տեխնիկական որոշ կանոններ, սակայն այն **չի ներկայացնում բովանդակային ուղենիշեր**՝ այն լրացնող սուբյեկտների համար։

14. *Միջազգային փորձում որպես իրազեկման գործիք ներդրվել է կարճ տեքստերով հաղորդագրություններ ուղարկելը՝ այն ֆոկուսացնելով մի քանի ուղղությունների վրա. **իրավական, բարեվարքության (բարոյական) սկզբունքներ**՝ շեշտադրելով հանրային ծառայողի **ազնիվ և անաչառ** լինելու կարևորությունը, **սոցիալական** և հնարավոր **պատասխանատվությունը**՝ նվերները չհաշվառելու դեպքում: Գործիքի կիրառումը արդյունքների և ազդեցության տեսանկյունից գնահատվել է դրական: Առավել ազդեցիկ են եղել բարեվարքության սկզբունքների վերաբերյալ հաղորդագրությունները:*

Այսպես, ուսումնասիրելով ԿԿՀ-ի 2023 թվականի հաղորդումները, ինչպես նաև 2024 թվականի առաջին եռամսյակի գործունեությունը, պարզ է դառնում, որ տարբեր թիրախային խմբերի համար կազմակերպված իրազեկումները և վերապատրաստումները վերաբերել են ընդհանուր առմամբ վարքագծի կանոններին, սակայն, որպես այդպիսին, նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերի վերաբերյալ վերապատրաստումներ և իրազեկումներ չեն կազմակերպվել: Համենայնդեպս, ադ տեղեկատվությունը բաց աղբյուրներում հասանելի չէ:

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով նվերների հանձնման և ռեեստրի և դրա իրավակարգավորումների վերաբերյալ մի կողմից, միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ ՏՁՀԿ-ի և ԳՐԵԿՈ-ի, միջազգային փորձի, այդ թվում՝ ԱլԳ երկրների, մյուս կողմից, ներպետական օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը՝ առաջարկվում է ՀՀ-ում կատարելագործել նվերների ռեեստրի վերաբերյալ իրավակարգավորումները՝ ըստ ներքոշարադրված առաջարկությունների։

Ա) Նվերների ռեեստրի և իրավակարգավորումների վերաբերյալ առաջարկություններ

1. Մշակել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և դրանում նախատեսել նվերների ընդունման կանոնների և դրանց հաշվառման վերաբերյալ կարգավորումները։

2. Վերանայել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ԿԿՀ-ի թիվ 01-Ն որոշումը և նախատեսել հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նաև **արգելված նվերների կամ դրանք առաջարկելու վերաբերյալ հաշվառումը**, որոնք թեկուզև չեն ընդունվել այս սուբյեկտների կողմից։

3. Վերացնել այն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և Որոշմամբ նախատեսված այն սահմանափակումը, ըստ որի օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից **հրապարակային կարգով տրվող արարողակարգային նվերները նույնպես հաշվառման ենթակա չեն։** Նախատեսել այս տեսակ նվերների հաշվառումը նույնպես։
   Բացի այդ հիշյալ կարգավորմամբ, պարզ չէ թե ինչպես է մեկնաբանվելու **«այլ անձանց»** կողմից եզրույթը. արդյո՞ք այն վերաբերում է միայն օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ

փոխկապակցված անձանց, թե՞ ընդգրկում է ցանկացածի անձի, ում կողմից տրվել է նվերը, թեկուզ հրապարակային։

Խնդրահարույց է նաև **«հրապարակային»** եզրույթի իմաստը։ Առաջարկում ենք ի լրումն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված չափանիշների, սահմանել որոշակի հավելյալ (հատուկ) չափանիշներ ԶԼՄ-ների համար, որոնք կվերաբերեն ոչ թե ԶԼՄ-ին առաջադրվող ընդհանուր օրենսդրական պահանջներին, այլ կլինեն հատուկ և կվերաբերեն դրա կիրառելիությանը և հանրային ազդեցությանը։ Օրինակ՝ հատուկ չափանիշ կարող է դիտարկվել դիտելիության, այցերի կամ տպագրության քանակը, հետևորդների (բաժանորդների) թիվը։ Եվ այս տեսակ հատուկ պահանջներին բավարարելու դեպքում միայն հրապարակումը կարելի է համարել հրապարակային։ Հակառակ պարագայում, այն **նպատակը**, որը կոչված է ապահովելու նվերի ստացման **հրապարակայնությունը**, չի կարող ապահովվել, եթե այն տարածվել է այնպիսի լրատվամիջոցի կողմից, որը ունի բավականին քիչ լսարան, լայնորեն տարածված չէ, և հանրությունը ունի որոշակի բացասական վերաբերմունք այդ ԶԼՄ-ի օբյեկտիվության նկատմամբ։

Բացի այդ, նաև պարզ չէ, թե ինչպես է ԿԿՀ-ն կարողանալու վերահսկել կատարված հրապարակումները, հատկապես, եթե դրանք կատարվեն կոնկրետ չափանիշների չհամապատասխանող ԶԼՄ-ների միջոցով։

4. Վերանայել 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ԿԿՀ-ի թիվ 01-Ն որոշման 4 -րդ կետը։ Ի լրումն այն նպատակների, որոնք նախատեսված են Որոշման 4 -րդ կետով, նվերների հաշվառման նպատակներից պետք է լինի նաև նվերների կառավարման **հրապարակայնության ապահովումը, ինչպես նաև հանրային վերահսկողությունը։** Ուստի այս տեսանկյունից, առաջարկում ենք ռեեստրի նպատակների շարքում նախատեսել նաև նվերների կառավարման **հրապարակայնությունը**։ Համանման կարգավորում առաջարկում ենք նախատեսել նաև Պետական գույքի կառավարման կոմիտեի, Պետական արարողակարգի ծառայության և տեղական

ինքնակառավարման մարմինների գործունեությունը կարգավորող, ինչպես նաև այլ ոլորտային իրավական ակտերում։

5. Քննարկել անհատական նվերների հասկացությունը սահմանելու և անհատական նվերների գնման հնարավորության նպատակահարմարությունը, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ նվերների բացահայտման, հաշվառման և դրանք հետագայում գնելու դեպքում՝ օրինական տնօրինելու հարցում։

6. Քննարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված թույլատրելի նվերների արժեքի շեմը գերազանցելու դեպքում այդ նվերների գնման հնարավորության նպատակահարմարությունը, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ նվերների բացահայտման, հաշվառման և դրանք հետագայում գնելու դեպքում՝ օրինական տնօրինելու հարցում։

7. Մշակել և ներդնել նվերների հաշվառման և հանձնման մանրամասն **վիճակագրություն վարելու կարգ**։ Վիճակագրության գործիքը կարող է ներառվել նվերների թվային ռեեստրում՝ հիմնվելով համակարգ մուտք գործած տվյալների հետ, որի արդյունքում համակարգը ինքնաշխատ կերպով կգեներացնի և կհրապարակի մանրամասն վիճակագրությունը։
Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչև թվային ռեեստրի պատրաստումն ու գործարկումը որպես միջանկյալ լուծում ԿԿՀ-ն ներդրել է նվերների հաշվառման ձևաթուղթ, ապա առաջարկվում մինչև թվային ռեեստրի գործարկումը՝ նվերների հաշվառման և հանձնման վիճակագրությունը ներկայացնել առանձին փաստաթղթի (ձևաթղթի) միջոցով, որի հիման վրա կհրապարակվի միասնական վիճակագրություն։

8. Վերանայել 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ԿԿՀ-ի թիվ 01-Ն որոշումը և մասնավորապես՝ այն կարգավորումը, ըստ որի լրացված նվերների հաշվառման ձևաթուղթը **մնում է հրապարակված Ռեեստրում**՝ լիազորությունների դադարման կամ դադարեցման օրվանից հետո՝ **երեք տարվա ընթացքում**։ Երեք տարվա ընթացքում հանրային ծառայության կամ հանրային **պաշտոն կրկին չստանձնելու դեպքում**՝ նվերների հաշվառման

ձևաթուղթն Հանձնաժողովի կողմից **արխիվացվում է Ռեեստրում**: Հիշյալ կարգավորման հիմնավորումը այն է, որ նշված տեղեկության գրանցումը, հաշվառումը, պահպանումը կապված է անձի հանրային ծառայող հանդիսանալու կամ հանրային պաշտոն զբաղեցնելու հետ, նրա կողմից բարեվարք վարքագծի դրսևորման նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ այս ժամկետի սահմանումը պարզ չէ այն դեպքում, երբ անձի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիրը՝ անկախ նրա լիազորությունների դադարեցման ժամկետից, մշտապես հասանելի է հանրության համար, և ըստ էության հանդիսանում է **կարևոր գործիք հանրային վերահսկողության** իրականացման նկատմամբ: Հանրային վերահսկողության գործիքի ներդրումը նվերների ինստիտուտում նույնպես կարևոր նշանակություն ունի:

Միաժամանակ, քննարկելով այն հնարավորությունը, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով հնարավոր է փնտրել և ստանալ անհրաժեշտ տեղեկությունը, ապա հարկ է ընդգծել, որ այն ուղղակի ավելացնելու է վարչարարությունը այն դեպքում, երբ այն տեղեկությունը և գործիքը իր բնույթով ենթադրում է լինել հանրային և սահմանափակվի ժամանակի գործողության մեջ:

9. Վերանայել թույլատրելի նվերների գնահատման կարգը: Մասնավորապես՝ գների որոշման նպատակով թույլատրվում է օգտվել էլեկտրոնային և առկա առևտրային բոլոր հարթակներից (օրինակ՝ amozon, e-bay, taobao, ozon, wildberries, ՀՀ կամ արտերկրում գործող առևտրի կամ ծառայությունների մատուցման այլ հարթակներ): Իհարկե, Որոշմամբ նախատեսված են բոլոր հարթակները, և դրանք ընտրելու հնարավորություն է տրված հենց նվեր ստացողին: Միևնույն ժամանակ, հանրությանը քաջ հայտնի է, որ այս հարթակներից շատերում չեն բացառվում կեղծված ապրանքների վաճառքը, որոնք վաճառվում են շուկայականից ցածր գներով: Հետևապես, առկա է վտանգ, որ նման կարգավորում նախատեսելու դեպքում, անձը ունենալով իրավունք գնահատումը կատարել նշված հարթակների միջոցով, կարող է չտարբերակել օրիգինալ և ոչ օրիգինալ ապրանքը, և առաջնորդվի ցածր

գնով, ինչի արդյունքում վերջինս շեմից ցածր նվերը չի հայտարարագրի։ Ընդ որում, բոլոր այս դեպքերի համար ԿԿՀ-ն չունի ստուգելու համար համապատասխան գործիքակազմ։ Հետևապես, առաջարկվում է քննարկել գնահատման իրականացման այլ հնարավորություններ, օրինակ՝ ծագման երկրի կամ ընթացիկ շուկայական արժեքի շրջանակներում՝ հիմնվելով կոնկրետ ապրանքի պաշտոնական ներկայացուցչի կողմից հրապարակված գների սանդղակում։

Բացի այդ, կարգավորված չէ նաև այն հարցը, թե ինչպես է կատարվելու այն նվերի հաշվարկը, որը նվիրողի կողմից ձեռք է բերվել զեղչով (ենթադրենք՝ օտարերկրյա պետության սահմաններում), սակայն առցանց աղբյուրներում ապրանքի գինը ներկայացված է ոչ զեղչված տարբերակով։

10. Վերանայել 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ԿԿՀ-ի թիվ 01-Ն որոշումը հետևյալ մասով. որոշման համաձայն՝ նվերների հաշվառման ձևաթղթում նվերի վերաբերյալ տվյալների բաժնում նշվում է՝ *«դ.» նվերի՝ ստացողի կողմից գնահատված արժեքը*։ Իսկ արդեն նվերների հաշվառման ձևաթղթին կից ներկայացվում է նաև նվերի գնի որոշման համար օգտագործված ինտերնետային տիրույթի բաց աղբյուրների կամ գների վերաբերյալ հանրամատչելի տեղեկությունների լուսանկարները կամ նվերի գինը հավաստող այլ փաստաթղթեր։ Ենթադրաբար կից ներկայացվող հատվածում հնարավոր է լինելու միայն կցել փաստաթղթեր, իսկ պրակտիկայում կարող են հանդիպել դեպքեր, երբ նվեր ստացողը գնահատումը կատարում է այլ մեթոդներով, որոնք տվյալ դեպքում հասանելի կլինեն իրեն, սակայն նախատեսված (թվարկված) չեն որոշմամբ, ուստի առաջարկվում է վերախմբագրել «դ.» կետը և նվերի՝ ստացողի կողմից գնահատված արժեքի հետ միասին հնարավոր տալ հաշվառում իրականացնող անձին նշել՝ թե ինչպե՞ս է որոշել նվերի արժեքը։ Նույն փոփոխությունը առաջարկվում է կատարել նվերների հաշվառման Excel ձևաթղթում։

Բ) Նվերների ռեեստրի և իրավակարգավորումների վերաբերյալ վերապատրաստումների և հանրային իրազեկման վերաբերյալ առաջարկություններ

1. Պատգամավորների վարքագծի կանոնագիրքը ընդունելուց հետո, իրականացնել դրա վերաբերյալ համակարգված և խորացված ուսուցում, ինչպես նաև ներդնել խորհրդատվության իրականացման մեխանիզմներ։

2. Կազմակերպել վերապատրաստումներ **հանրային ծառայության բոլոր մակարդակներում՝** շեշտադրումը դնելով նաև նվերների ինստիտուտի վերաբերյալ գործնական խնդիրների (իրավիճակների) լուծմանը, **իրականացնել իրազեկումներ** Ռեեստրից օգտվելու վերաբերյալ և **չսահմանափակվել** միայն իրազեկման թերթիկներ կամ տեղեկատվական բրոշյուրներ ուղարկելով, կամ **սահմանափակ թվով** մարդկանց վերապատրաստելով (օրինակ՝ չսահմանափակվել միայն բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապատրաստելով՝ ուսուցանողների ուսուցման ձևաչափով)։
   Վերապատրաստումների և իրազեկումների թիրախ դիտարկել Ռեեստրից օգտվող **յուրաքանչյուր ոքի**, սրանում ներառելով նաև ՁԼՄ-ներին և հասարակական կազմակերպություններին, որոնք կիրականացնեն անկախ, շարունակական և հանրային վերահսկողություն։

3. Մշակել և հրապարակել նվերների ռեեստրի, և որպես միջանկյալ լուծում ներդրած նվերների հաշվառման ձևաթղթի ուղեցույց՝ ներառելով **բովանդակային ուղենիշեր**՝ այն լրացնող սուբյեկտների համար։

4. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար, որոնք ունեն պարտավորություն լրացնել նվերների հաշվառման ռեեստրը, մշակել և էլեկտրոնային փոստերի միջոցով (համագործակցելով կոնկրետ մարմինների և ՏԻՄ-երի գլխավոր քարտուղարների հետ) ուղարկել իրազեկման թերթիկներ՝ ռեեստրը լրացնելու վերաբերյալ։
   Բացի այդ, վերը նշված սուբյեկտների վերապատրաստումների թեմաներով ներառել նաև պրակտիկ դասընթացներ՝ ռեեստրի լրացման վերաբերյալ։